

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մուրաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխթեր (Բայերպատերն), պրոֆ. դր. Ժ. Փիվոր
(Աախեն), դր. Գ. Գևորգյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Սուրուբյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Չեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաբյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք է

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

THE ARMENIAN COLLECTION OF THE
CAUCASIAN MUSEUM

SAMVEL KARAPETYAN

АРМЯНСКАЯ КОЛЛЕКЦИЯ КАВКАЗСКОГО МУЗЕЯ

САМВЕЛ КАРАПЕТЯН

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ - 294

Խմբագիր՝ **Անուշավան Զաքարյան**
բանասիր. օրհտ. թեկնածու

Կ - 294 Կարապետյան Սամվել
Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն.– Եր.:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004.–96 էջ

Գիրքը ներկայացնում է Այսրկովկասի ամենահին թանգարաններից մեկի՝ Կովկասյան թանգարանի և նրա հայկական հավաքածուների համառոտ պատմությունը:
Հասցեագրվում է թանգարանագետներին և ընթերցասեր հասարակությանը:

В книге представлены краткая история и сведения об армянской коллекции одного из древнейших историко-естествоведческих музеев, основанных в Закавказье - Кавказского музея.

Работа предпослана специалистам-музееведам и широкой читательской аудитории.

The present volume treats the brief history of the Armenian collection of the Caucasian Museum, one of the ancient Museums of History and Natural Sciences founded in Transcaucasia. The work is addressed to specialists in museums and the general reader.

ԳՄԴ 63.3(2Հ)

Կ $\frac{0503020913}{703(02)2004}$ 2004 թ.

ISBN 5-8080-0584-1

© Սամվել Կարապետյան, 2004

© «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ (RAA), 2004

Աշխատության հրատարակությունն իրականացվել է
տեր և տիկին Հայկ և Սոսե Վարդապետյանների (Ֆրանսիա)
հովանավորությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	4
Ընթերցողին	5
To the reader	6
К читателю	7
Երկու խոսք	8
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	10
Թանգարանի հիմնելու նախապատմությունը	10
Թանգարանը վերաբացման ընթացքում	12
Թանգարանի հանդիսավոր բացումը	12
Թանգարանի նկարագրությունը	14
Դրամական նվիրատվություններ	14
Նվիրատվություններ	15
Թանգարանի այցելուները	15
Թանգարանի վարչակազմը	15
Գիտարշավներ	16
Թանգարանի նյութերի համալրումը Հայաստանի հնավայրերի գտածոներով	19
Թանգարանի գործունեությունը 1907-1919 թթ.	28
Թանգարանի ազգայնացումը և հայկական մշակութային արժեքների բռնագրավումը	28
Թանգարանի գործունեությունը 1940-ական թվականներից հետո	35
ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐԸ	41

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Սույն աշխատության ստեղծման գաղափարը ծագել է 1985 թ., երբ առիթ ունեցանք Վրաստանի «Արմագի» թանգարանում տեսնելու երբեմնի հանրահայտ Կովկասյան թանգարանից այստեղ փոխադրված և անմխիթար ու լքված վիճակում գտնվող հայկական հուշակոթողները: Հետաքրքրվելով դրանց ճակատագրով և խորամուխ լինելով նյութի մեջ՝ ցավալիորեն բացահայտվեց մեր ժողովրդի հանդեպ գործված ևս մեկ անարդար իրողություն, որը հիմնականում առնչվում է Առաջին աշխարհամարտի հետևանքներին: Մշակութային հազարավոր արժեքներ, որոնք պատերազմի դժնդակ օրերին ազգային մշակույթի մեր նվիրյալները մեծագույն զոհաբերություններով մի կերպ կարողացել էին փոխադրել ժամանակավոր ապաստանավայր նկատված Թիֆլիսի Կովկասյան թանգարան, 1919 թ. հաստատության ազգայնացումով, փաստորեն, բռնազավթվեցին Վրաստանի Հանրապետության կողմից:

Հայաստանի առաջին Հանրապետության պատասխանատուները, գիտակցելով հարցի՝ ազգային-պետական կարևորությունը, նույն՝ 1919 թվականին, սկսեցին բանակցել վրացական իշխանությունների հետ թանգարանի 2/3-րդ մասը կազմող հայկական մշակութային արժեքները Հայաստանին վերադարձնելու համար: Եվ, սակայն, չհաջողվեց:

Հայաստանի խորհրդային «եղբայրասեր» իշխանություններն իրենց յոթանասունամյա կառավարման ընթացքում էլ չմտաբերեցին կորուստը, իսկ Վրաստանի ոչ պակաս «եղբայրասեր» իշխանությունները, անվերջ տեղից տեղ փոխադրելով, զանազան թանգարանների և ինստիտուտների միջև ցրելով, մասնատեցին և զգալի մասով էլ «խնամքով» փչացրին բռնազավթված հայկական հավաքածուները:

1991 թ. ի վեր, մեկ դարի մեջ երկրորդ անգամ անկախացած և հաղթարշավով 21-րդ դար թևակոխած Հայաստանը, կարծում ենք, տեր կկանգնի դրանց և դատապարտելով՝ կպահանջի հայրենիք վերադարձնել դրացի Վրաստանի կողմից 1919-ից բռնազավթված երբեմնի Կովկասյան թանգարանի հայկական արժեքները, ինչ էլ որ դրանցից մնացած լինեն:

Խորին շնորհակալություն են հայտնում Ս. Դարչինյանին, Հ. Սանասարյանին, Հ. Չաքարյանին, Ա. Դուլյանին և Հ. Բադալյանին՝ սիրահոժար տրամադրած լուսանկարների և զանազան այլ նյութերի համար:

Երախտիքի զգացումներս են փոխանցում նաև գրքի հրատարակության հովանավորներ Վարդապետյան ամուսիններին և «Ջավեն և որդիք» հրատարակչատանը:

TO THE READER

The idea of creating the present work was born in 1985. Then we had the opportunity to see the Armenian exhibits of the former Caucasian Museum kept in the Armazi Museum in a state of utter dereliction. Making inquiries into the fate of those exhibits and conducting research on the relevant material, we regretfully discovered another manifestation of the injustice done to the Armenian nation, actually one of the consequences of World War I.

In the chaotic days of the war the devotees of our national culture made every possible sacrifice to somehow move thousands of works of Armenian culture to the Caucasian Museum, Tiflis, which was regarded as a provisional haven. All those valueable items, however, were misappropriated by the Georgian Government with the nationalization of the Museum in 1919.

In the same turbulent year of 1919, realizing the national and state significance of the issue, the authorities of the first Republic of Armenia entered into negotiations with the Georgian Government for the restitution of the Armenian exhibits, which made up two-thirds of the Museum's collection. All their endeavours, however, were in vain due to the complicated political situation and, especially, the untimely loss of Armenia's independence.

The issue was consigned to complete oblivion throughout the seventy years of the reign of the "fraternal" soviet authorities of Armenia. The "brotherly" Soviet Republic of Georgia, meanwhile, "carefully" marred the misappropriated Armenian exhibits by endlessly moving them from one museum to another and from one institute to the other.

The Republic of Armenia, that gained independence for a second time in the 21-st century, gives us hope that despite the cosmopolitanism that the country has inherited from the soviet regime (regretful as it is, it has become part and parcel of our very essence), it will finally acquire enough strength to condemn the appropriation of the Armenian exhibits of the former "Caucasian Museum" by the neighbouring Georgian state and demand their restitution to their rightful owners, regardless of what has survived of the original collection.

To conclude, we would like to express our profound gratitude to S. Darchinian, H. Sanasarian, H. Zakarian, A. Ghoulian and H. Badalian, who willingly provided us with materials and photos vital for the present work.

We also express our deepest gratitude to Mr. and Mrs. Vardapetian for their sponsorship of the publication of the book and the publishing house "Zaven & Fils", Beirut, Lebanon.

К ЧИТАТЕЛЮ

Идея создания книги зародилась в 1985 г., когда нам впервые выпала возможность увидеть в музее “Армази” армянские памятники, перевезенные сюда из “Кавказского музея” Тифлиса, сохранность которых оставляла желать лучшего.

Изучение этих памятников и ознакомление с относящимися к ним материалами выявило факт еще одной вопиющей несправедливости в отношении армянского народа, имевшей место в результате первой мировой войны.

Множество культурных ценностей, ценою невероятных жертв перевезенных в тифлисский “Кавказский музей” в трудные годы войны подвижниками национальной культуры, в 1919 году фактически было конфисковано грузинскими властями в результате национализации музея.

Понимая важность вопроса, государственные мужи Первой республики Армении в том же 1919 году вступили в переговоры с грузинскими властями по вопросу возврата Армении 2/3 музейных экспонатов, касающихся армянской культуры. Однако переговоры не увенчались успехом в силу сложной политической ситуации и потери независимости.

Власть предержавшие Армении на протяжении 70 лет не удосужились вспомнить о факте этой огромной потери, а власти Грузии, движимые “братским чувством” к соседней республике, “позаботились” о плохой сохранности конфискованной армянской коллекции, перевоза ее с места на место и распределив по разным музеям и институтам.

Надеемся, что на протяжении одного столетия дважды приобретшая независимость и победоносно вступившая в XXI век Армения, вопреки унаследованному от советского периода трагическому космополитизму, нивелировавшему национальный облик, найдет в себе силы потребовать и вернуть на родину национальные культурные ценности, с 1919 года конфискованные Грузией.

В заключение хочу выразить благодарность С. Дарчиняну, А. Санасаряну, О. Закаряну, А. Гуляну и О. Бадалян, любезно предоставившим нам различные материалы и фотоснимки.

Выражаю искреннюю признательность спонсорам книги - супругам Вардапетян и издательству “Завен и сыновья”.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Անհիշելի ժամանակներից Հայկական բարձրավանդակի երկրագործ բնիկ տարրը՝ հայ ժողովուրդը իր գոյության ողջ ընթացքում արարել է նյութական մշակույթի անհամբեղի հուշարձաններ: Ստեղծելը, կառուցելն ու շենացնելը կացութաձև ունենալով՝ հայն իր հայրենիքը դարեր շարունակ հարստացրել ու ճոխացրել է մշակութային այնպիսի ուրույն արժեքներով, որոնք գնահատվում և ներկայանում են իբրև համաշխարհային քաղաքակրթության մնայուն գանձեր:

Առաջին աշխարհամարտի տարիներին իր իսկ հայրենիքում կամ բռնագաղթի ճամփաներին գերեզմանվեց մշակութաստեղծ հինավուրց այդ ժողովրդի մեծագույն հատվածը, իսկ փրկվածները բնավեր ու աշխարհասփյուռ եղան: Որբացավ հայաթափ Հայաստանի մշակույթը:

Հայի արյունը առօրյա «սննդի տեղ» ընդունած թուրքն ու քուրդը, հոշոտելու համար այլևս հայ չգտնելով, առանց ժամանակ կորցնելու հարձակվեցին հայոց գերեզմանների, եկեղեցիների ու այն ամենի վրա, ինչը հիշատակ էր մնացել նահատակված ժողովրդից: Հայի վաստակը թաքցված գանձի տեսքով գտնելու հույսով՝ անվերջ քանդեցին, պայթեցրին ու քարը քարի վրա չթողնելով՝ հողին հավասարեցրին բազում դարերի ընթացքում արարված, բայց արդեն որբացած մշակույթը...

Նույն այդ տարիներին հարազատ մշակույթից գոնե ինչ-ինչ փշրանքներ փրկած լինելու մտահոգությամբ առանձին անհատներ և, առաջին հերթին, Թիֆլիսում գտնվող Կովկասյան թանգարանի ավագ վերահսկիչ Սմբատ Տեր-Ավետիսյանի անդուլ ջանքերի գնով իբրև ժամանակավոր ապաստան՝ «ապագայում իրենց տեղերը դարձնելու մտքով», հիշյալ թանգարան փոխադրվեց հոշոտված բնիկներից մնացած մշակութային արժեքների թանկագին բեկորները:

Տասնամյակներ շարունակ Հայաստանի այլևայլ հնավայրերից, իսկ Առաջին աշխարհամարտի օրերին Արևմտյան Հայաստանից մշակութային բազմաբնույթ հուշարձաններ Կովկասյան թանգարան փոխադրած հայ պատմաբանները, ազգագրագետներն ու հնագետները, իհարկե, ժամանակին բնավ չէին կարող երևակայել, որ այդ քայլով հենց իրենք՝ մեր մասունքների փրկարարները, գերության էին դատապարտում թանգարանային նկատված արժեքները և որ ժամանակավոր ապաստան ու «փրկության ափ» համարված Թիֆլիսը դրանց համար վերածվելու էր հարատև կալանատեղիի... Ինչպես ցմահ բանտարկյալներ, որ ժամանակի ընթացքում հյուծ-

վում ու մահանում են, 1919 թ. ի վեր Վրաստանի կառավարության որոշմամբ ազգայնացված նախկին Կովկասյան թանգարանում տեղ գտած մեր ազգային հարստության մասնիկները տասնամյակների ընթացքում նվաղել ու փոշիացել են:

Ցավով պետք է արձանագրել, որ գերության մեջ հայտնված մշակութային ժառանգությունը հայրենիք վերադարձնելու ուղղությամբ, բացի Առաջին հանրապետության ձեռնարկած, սակայն անհետևանք մնացած ինչ-ինչ քայլերից, հայաստանյան իշխանություններն այլևս որևէ քայլ չեն ձեռնարկել: Թերևս երջանիկ բացառություն է միայն Մշո Առաքելոց վանքի հրաշակերտ դուռը, որն ինքը՝ Սմբատ Տեր-Ավետիսյանը, իր նախաձեռնությամբ մի կերպ կարողացել էր 1922 թ. փոխադրել Երևան: Մինչդեռ ազգային ողջ հարստությունը ցայսօր հափշտակված ու բռնագրավված է...

Ցավալի է, որ երբևէ չի ստեղծվել երբեմնի Կովկասյան թանգարանի հավաքածուների և ցուցանմուշների 2/3-րդ մասը կազմող հայկական նյութերի գույքացուցակը և որը այժմ, թերևս, հնարավոր էլ չէ կազմել, քանի որ շատ բան անհետացել կամ վնասվել է, մնացյալներն էլ ցրվել են Թբիլիսիի տարբեր թանգարաններում և ինստիտուտներում:

Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին վրաց գիտնականները ազգայնացված թանգարանի կոթողային և վիմագրական հայկական նյութերին հավելել էին առավելապես Վրաստանի հարավային շրջաններից (Բուլնիսի, Դմանիսի, Թեթրի-Շղարոյի շրջաններ) հավաքագրած բազմաթիվ նմուշներ, որոնց վերաբերյալ հրատարակված գույքացուցակ նույնպես գոյություն չունի:

Սույն աշխատությունը հեռու է երբեմնի Կովկասյան թանգարան մուտք արված հայկական հավաքածուների համար ոչ միայն լիակատար, այլև նույնիսկ մասնակի ցանկ դառնալու հավակնությունից: Կարծում ենք, սակայն, որ այն բոլոր տվյալները, որոնք տարիների ընթացքում կարողացել ենք հավաքագրել և մեկտեղել ընթերցողին գոնե կօգնեն որոշ պատկերացում կազմելու այն ամենի մասին, ինչն ունեինք և որն այժմ, ցավոք, մերը չէ...

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թանգարան հիմնելու նախապատմությունը. Կովկասում թանգարան հիմնելու գաղափարն արժարժվել է դեռևս 1840-ական թվականներին՝ Կովկասի փոխարքա Միխայիլ Վորոնցովի (1844-1854 թթ.) պաշտոնավարության ժամանակ¹: 1852 թ. ապրիլի 5-ին Կարգադրիչ կոմիտեն քննարկել է այդ խնդիրը, և հանձնարարվել է գրող, իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ Սոլյոգուբին կազմել նախագիծ: Շուտով՝ մայիսի 10-ին, ընդունվում է Վ. Ա. Սոլյոգուբի նախագիծը, և Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքն ստեղծում է իր թանգարանը²: Այնուհետև որոշվում է գտնել հարմար շենք, կազմել ծրագիր և կանոնադրություն (այն անձանց համար, ովքեր ցանկանում էին մասնակցություն ունենալ թանգարանի ստեղծման գործում), ստեղծել Կովկասի ազգագրությունն ուսումնասիրող հատուկ հանձնախումբ: Վերջինիս անդամագրվել են նաև իշխան Վ. Ա. Սոլյոգուբը, Ա. Բ. Իվանիցկին, Գ. Ա. Տոկարև, Ա. Պ. Բերժեն և իշխան Չելոկակը: Ընտրվում է նաև թանգարանի տնօրինության կազմը (Վ. Ա. Սոլյոգուբ, Կ. Լ. Չերմակ)՝ Ե. Ս. Անդրեևսկու նախագահությամբ: 1852 թ. օգոստոսի 1-ին 5 տարի ժամկետով և տարեկան 600 արծաթե ռուբլով վարձակալվում է փոխգնդապետ Ռոզալիա Լիպինսկայայի տան (հասցեն՝ Ալեքսանդր Ճավճավաձեի փ. 6, Կոմենդատսկայա՝ այժմ Գրիբոյեդովի փող.) վերին հարկը (բաղկացած էր 7 սենյակից)³:

1852 թ. աշնանը Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժնի Վերահսկիչ կոմիտեն 325 արծաթ ռուբլի է հատկացնում ավատրիահպատակ բնախույզ Ֆրիդրիխ Բայերնին՝ Կովկասի բնագիտական առաջին հավաքածուով թանգարանը համալրելու համար⁴:

1852 թ. վերջին թանգարանի ցուցանմուշների թիվը հասնում էր 105-ի (հիմնականում ազգագրական իրեր էին՝ նվիրված Վ. Ա. Սոլյոգուբի կողմից), իսկ 1854-ին արդեն՝ 3315-ի⁵: Նվիրատուների թվում հիշվում են նաև Ա. Բ. Իվանիցկին, Մ. Ս. Վորոնցովը, Ա. Ն. Բեկետովը:

1853 թ. հունվարի 27-ին ընտրվում է թանգարանի տնօրինությունը:

Այդ շրջանում թանգարանի տնօրինության անդամների մեջ հետաքրքրությունն առանձնապես մեծ է եղել ազգագրության նկատմամբ: Շուտով թանգարանը համալրվում է այդ բնագավառի մեծարժեք հավաքածուներով (նվիրատուներ՝ Մ. Վորոնցով, Վ. Սոլյոգուբ, Ռ. Էրիսթով, Գ. Տոկարև, Մակինցյանց, Ա. Բերժեն, Ռոմանով և այլք): Ինչ վերաբերում է բուսաբանության և կենդանաբանության բնագավառի նյութերին, ապա դրանցով թանգարանը համալրվում էր անհամեմատ ավելի դանդաղ:

1856 թ. մայիսի 5-ին թանգարանն իր դռները բաց է անում այցելուների առջև (մուտքը միայն կիրակի օրերին, ժամը՝ 12-14-ը): Թվում էր, թե աշխատանքները մտել են բնականոն ընթացքի


1 Ռ. Ն., Исторический очерк возникновения и развития Кавказского музея.— «Кавказ», 1903, № 78, с. 2.

2 Джавахишвили А. И., Краткий обзор прошлой и будущей деятельности Государственного Музея Грузии им. акад. С. Н. Джанашиа.— «ՄԱՌ-ԳԱ Տեղեկագիր», 1950, № 8, էջ 111: Նաև՝ Бочоришвили А., Тбилиси как один из научных центров.— «ՄԱՌ-ԳԱ Տեղեկագիր», 1958, № 10, էջ 4: Նաև՝ Жордания Г., История возникновения Кавказского музея, Тифлис, 1951, с. 120.

3 Жордания Г., նշվ. աշխ., էջ 120:

4 «Коллекции Кавказского музея», т. VI, Тифлис, 1912, с. 77.

5 Жордания Г., նշվ. աշխ., էջ 126:



Կովկասյան թանգարանի շենքի առաջին նախագիծը (չի կառուցվել)

մեջ, սակայն հաստատությունը ծանր կացության առջև է կանգնում: Շուտով ոչ միայն դադարեցվում են թանգարանային նյութերի համալրումն ու հարստացումը, այլև տնօրինության կազմի արձակումով թանգարանում տեղ գտած բազմաթիվ արժեքավոր հավաքածուները 1861 թ. հայտնվում են գրեթե անխնամ ու անտեր վիճակում և ամբողջովին քայքայվում⁶:

1858 թ. օգոստոսին լրանում է Ռ. Լիպինսկայայի հետ կնքած տարածքի վարձակալման պայմանագրի ժամկետը և թանգարանը գրասենյակի և գրադարանի հետ փոխադրվում է տիտուլյար խորհրդական Իվան Ջուբալովի՝ ճավճավաձեի փողոցում գտնվող տունը: Վարձակալման պայմանագիրը կնքվում է 6 տարով՝ 600 արծաթ ռուբլով⁷:

1861 թ. մայիսը ճակատագրական էր Կովկասյան թանգարանի համար. նախ թանգարանի տնօրինության նախագահ Ա. Նիկոլային Թիֆլիսից մեկնելու պատճառով ազատվում է աշխատանքից: Այա Կարգադրիչ կոմիտեի նորընտիր կազմը ոչ միայն բացասական է վերաբերվում թանգարանի գործունեությանը՝ նշելով, որ «...Ամենից առաջ անհրաժեշտ էր կենտրոնացնել միջոցները՝ դադարեցնելով բոլոր անօգուտ ծախսերը: Առաջին պլանում, իհարկե, թանգարանն էր»⁸, այլև քննարկվում է թանգարանի լուծարման հարցը⁹:

1862 թ. թանգարանը վարձակալում է Գոլովինյան պողոտայի (այժմ՝ Ռուսթավելու պողոտա) վրա գտնվող Գամազովի տունը¹⁰:

1864 թ. հունվարին նախկին փոխարքա իշխան Մ. Վորոնցովը Թիֆլիսում հաստատված գերմանացի բնագետ Գուստավ Ռադդեին հանձնարարում է կազմել երկրամասում կենսաբանական և աշխարհագրական ուսումնասիրություններ կատարելու ծրագիր: Շուտով ներկայացված ծրագիրը հաստատվում է, և գործը սկսվում է Կոլխիդայի հովիտների բուսակենդանական աշխարհի հետազոտմամբ¹¹:

1864 թ. օգոստոսին թանգարանը շենքային հարմարություններ չունենալու պատճառով լուծարվում է. գրքերը տեղափոխվում են Կովկասյան զինվորական շրջանի շտաբի գրադարան, իսկ գրասենյակը զբաղեցնում է գործերի կառավարիչ Դ. Ի. Կովալենսկու բնակարանը¹²:

6 Ռ. Ռ., նշվ հոդվ., էջ 2:

7 Жордания Г., նշվ. աշխ., էջ 144:


8 Նույն տեղում, էջ 163, 164 (բնագրում՝ «...Надо было прежде всего сосредоточить средства, прекратив все бесполезные расходы. На первом плане стоял, конечно музей»):

9 Նույն տեղում, էջ 164:

10 Նույն տեղում, էջ 168:

11 Ռ. Ռ., նշվ հոդվ., էջ 2:

12 Жордания Г., նշվ. աշխ., էջ 168:



Կովկասյան թանգարանի առաջին շենքի նախագիծն ու տեսքը (ներկայիս Գրիբոեդովի և ճավճավաձե փողոցների հատույթում)

Թանգարանը վերաբացման ընթացքում. մեկ տարի անց՝ 1865 թ. հունիսի 14-ին, կառավարությունը 2 տարի ժամկետով հաստատում է 3 բաժնից (բուսաբանական, կենդանաբանական և հանքաբանական) բաղկացած թանգարանի աշխատակազմի հաստիքները: Մինչ թանգարանային հատուկ շենքի կառուցումը՝ զբաղեցնում է Սերգեյան փողոցի վրա գտնվող Ծովյանների՝ 3 սենյակից բաղկացած սեփական տունը¹³:

Բնակարանն իր մակերեսով թանգարանի համար միանգամայն անբավարար է նկատվում արդեն 1866 թ., երբ Գ. Ռադդեն հարուստ նյութերով վերադառնում է Թալիշում (Լենքորանի գավառում) իրականացրած գիտարշավից¹⁴:

Նույն թվականի հունիսին հաստատվում են թանգարանի ծրագրերը, նոր հաստիքները, դրանով իսկ հաստատությունը դառնում է անկախ, ինքնուրույն մարմին¹⁵: Գ. Ռադդեն էլ նշանակվում է թանգարանի տնօրեն¹⁶:

Թանգարանի հանդիսավոր բացումը. Գ. Ռադդեի ջանքերով վերաբացված հաստատության պաշտոնական բացման տարեթիվ է համարվում 1867 թ. հունվարի 1-ը¹⁷: Կառավարությունը հարգում է Ռադդեի միանգամայն հիմնավոր խնդրանքը և 1868 թ. մայիսին հաստատում է փոխարքայի պալատի դիմաց գտնվող իշխան Գագարինի անավարտ ու ճարտարապետ Զալցմա-

13 **N. N.**, նշվ հոդվ., էջ 2: Ի դեպ, մեկ այլ հաղորդման համաձայն՝ 1865-ից թանգարանն ունեցել է 4 բաժին՝ ազգագրական, կենդանաբանական, բուսաբանական և երկրաբանական («Кавказский календарь на 1867 г.», Тифлис, 1866, с. 275).

14 **N. N.**, նշվ հոդվ., էջ 2:

15 **А. Ж.**, Д-ръ Г. И. Радде.— «Кавказ», 1899, № 105, с. 2.

16 **Кобяков Юр.**, Кавказский музей.— «Тифлисский листок», 1908, № 214.

17 «Кавказский календарь на 1868 г.», Тифлис, 1867, с. 449. Նաև՝ **Фирсов Андрей**, Кавказский музей.— «Кавказ», 1903, № 84, с. 2. Նաև՝ **Кобяков Юр.**, նշվ հոդվ.:

նի ավերված տների տեղում թանգարանի համար միահարկ հատուկ շենք կառուցելու նախագիծը: Նույն թվականի օգոստոսից էլ սկսվում են կառույցի շինարարական աշխատանքները, և ուղիղ մեկ տարի անց՝ 1869 թ. սեպտեմբերի 1-ին¹⁸, այն ամբողջանում է (ի դեպ, շինության կառուցման համար կառավարությունը հատկացրել էր 26.000 ռուբլի)¹⁹:

Նույն թվականին Կովկասյան թանգարանն իր ենթակայության տակ գտնվող հասարակական գրադարանի հետ դրվում է Կովկասի փոխարքայի իրավասության ներքո:

Թանգարանի նորակառույց շենքի հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1870 թ. սեպտեմբերի 1-ին: Շենքի վերատեսուչ է նշանակվում Ս. Ն. Տրուբեցկոյը²⁰:

1872 թ. սկզբին Գ. Ռադդեն մեկնում է Մոսկվա՝ մասնակցելու մոսկովյան պոլիտեխնիկական ցուցահանդեսին, որտեղ ներկայացվում են նաև կովկասյան բաժնի հավաքածուն՝ տնայնագործական իրեր (հիմնականում՝ գորգեր), եկեղեցիների և ճարտարապետական այլ հուշարձանների լուսանկարներ (ի դեպ, ցուցահանդեսի փակումից հետո իրերը հանձնվում են Կովկասյան թանգարանին)²¹:

Գ. Ռադդեի գլխավորությամբ իրականացվող ամենամյա գիտարշավներից հետո այնքան առատ նյութեր էին թանգարան բերվում, որ 1878 թ. անհրաժեշտություն է զգացվում դրա միահարկ շենքը վերափոխել երկհարկանի: Այս առավել սուր է դրվում 1879 թ., երբ Հնագիտական ընկերությունը թանգարանին է փոխանցում մեծաթիվ հավաքածուներ: Նույն՝ 1879 թվականին, կառավարությունը 46.000 ռուբլի է փոխանցում թանգարանի շենքը վերակառուցելու նպատակով (ճարտ՝ Բիլֆելդ): Եվս 5.000 ռուբ. հատկացվում է շենքի ներքին հարդարանքի, մասնավորապես՝ որմերը ներքուստ նկարազարդելու համար (որմնանկարիչ՝ Ֆրանց Ջիմմ)²²: Թանգարանի շենքի վերակառուցման աշխատանքներն ավարտվում են նախատեսված ժամկետում. հանդիսավոր բացումը կատարվում է 1881 թ. սեպտեմբերի 9-ին:



Կովկասյան թանգարանի ստեղծման ջատագով, հովանավոր և նվիրատու փոխարքա Սիխայիլ Վորոնցով



Կովկասյան թանգարանի հիմնադիր տնօրեն Գուստավ Ռադդե

18 “Кавказский календарь на 1871 г.”, Тифлис, 1870, с. 374.

19 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 81.

20 **N. N.**, նշվ հոդվ., էջ 2:

21 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 83-84.

22 Նույն տեղում, էջ 114-115:



Կովկասյան թանգարանի քարտուղար Ա. Բերժեի հուշարձանը



Կովկասյան թանգարանի քարտուղար իշխան Ռ. Էրիսոբովը

Կովկասյան թանգարանն ու նրան կից գտնվող հասարակական գրադարանը գործում են Ժողովրդական լուսավորության նախարարության իրավասության ներքո: 1884 թ. մայիսի 8-ին նախարարությունը հաստատում է թանգարանի ինչպես աշխատակազմի, այնպես էլ գիտական գործունեության համար դրամական հատկացումները: Այդ կարգն անփոփոխ գործում է մինչև թանգարանի հիմնադիր տնօրեն Գուստավ Ռադդեի մահը (1903 թ., մարտի 2):

Մեծ է եղել թանգարանի ազգագրական բաժնի համալրումը հատկապես 1889 թ., երբ Թիֆլիսում բացված գյուղատնտեսական ցուցահանդեսի ավարտից հետո բոլոր ցուցանմուշները փոխանցվել էին թանգարանին:

1899 թ. վերջին թանգարանում նախապատրաստական աշխատանքներ են կատարվել Փարիզի համաշխարհային ցուցահանդեսին մասնակցելու համար. այն կայացել է 1900 թ. ապրիլի 1-14-ը: Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել նաև Ֆրանսիայի Հանրապետության նախագահը իշխան Տենիշևի և գաղտնի խորհրդական Պ. Սեմյոնովի ուղեկցությամբ²³:

1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում Կովկասյան թանգարանին և տնօրեն՝ Գ. Ռադդեին շնորհվել են ոսկե մեդալներ²⁴:

Թանգարանի նկարագրությունը. հակառակ ճակատային մասից շենքի ոչ մեծ լայնությանը՝ բակի կողմից կառույցը բավականաչափ ձգված ու ընդարձակ էր: 1903 թ. ականատեսը նշել է, որ 11 սրահներից բաղկացած երկհարկ շինության մուտքի առջև կանգնեցված էր հաստատության ստեղծման գործին մեծապես նպաստած Ա. Բերժեի (1828-1886) կիսանդրի²⁵: Ծանրության պատճառով թանգարանի մուտքին հարող մասում զետեղվել էին նաև գերեզմանական բնույթի մի քանի հուշարձաններ (հայկական և արաբական): Թանգարանի սրահներում ցուցադրված նմուշները խմբավորված են եղել 5 բաժիններում՝ երկրաբանական, կենդանաբանական, ազգագրական, բուսաբանական և պատմական հնությունների: Նախասրահը զարդարում էր թանգարանին նվիրաբերված ծովանկարիչ Հ. Այվազովսկու «Պետերբուրգի տեսքը Տրոյիցյան կամրջից» նկարը²⁶:

Դրամական նվիրատվություններ. Կովկասյան թանգարանը 1867-1903 թթ. ընթացքում դրամական եզակի նվիրատվությունն ստացել էր 1867 թ. տարեսկզբին (2.000 ռուբ.) Նախիջևանի գավառական ուսումնարանի տեսուչ, 1-ին կարգի վաճառական, պատվավոր քաղաքացի Ա. Ի.

23 “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1900 г.”, Тифлис, 1901, с. 4.

24 Նույն տեղում, էջ 5: Նաև՝ **Кобяков Юр.**, նշվ. հոդվ.:

25 **Фирсов Андрей**, նշվ. հոդվ.:

26 Նույն տեղում:

27 “Кавказский календарь на 1868 г.”, с. 450. Նաև՝ **N. N.**, նշվ. հոդվ., էջ 2:



Կովկասյան թանգարանի շենքը նախկին Գոլովինսկի, այժմ՝ Ռուսթավելու պողոտայի վրա. քաղխորհրդի որոշմամբ քանդվել է 1930-ական թվականներին և տեղում կառուցվել է Վրաստանի պատմության պետական թանգարանի շենքը

Սարգսյանցից²⁷:

Նվիրատվություններ. 1852 թ. Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովը ապագա թանգարանի համար կատարում է առաջին ներդրումը՝ նվիրելով կովկասյան ալպյան բույսերի հավաքածուն²⁸: Նույն թվականին նվիրատուների թվում հիշվում են նաև Վ. Ա. Սոլլոգուբը, Ա. Բ. Իվանիցկին, Մ. Ս. Վորոնցովը, Ա. Ն. Բեկետովը:

1854 թ. իշխան Սոլլոգուբը թանգարանին նվիրել է պերճանքի առարկաների, իշխան Մ. Վորոնցովը՝ Կերչենսկի հնությունների թանկարժեք հավաքածուն²⁹:

1856 թ. բարոն Ի. Ա. Վրեսկին թանգարանին նվիրել է Չեչնիայի Վալերիկ գետի վերին հոսանքի շրջանից, գեներալ Վ. Ա. Բեքուտովը՝ Լաբա գետի շրջակայքից հայտնաբերված հնությունների հավաքածուները, Ե. Դ. Մակինցևը՝ պարսկական թանկարժեք իրեր³⁰:

1857 թ. թանգարանին նվիրել են Ստավրոպոլի մոտ վայր ընկած ասուպը³¹:

1891-1892 թթ. Ախթալայի պղնձե հանքերի նախկին կառավարիչ Ն. Մորզանը թանգարանին է նվիրել 575 քարատեսակի 4000 նմուշ³²:

Թանգարանի այցելուները. 1867 թ. մայիսի 15-ից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում թանգարանն ունեցել է 2000 այցելու, իսկ հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 15-ը՝ ևս 2000 այցելու³³: 1876 թ. ունեցել է 3671 այցելու³⁴, 1896 թ.՝ 9056 այցելու³⁵, 1900-ին՝ 9152 այցելու³⁶:

Թանգարանի վարչակազմը. 1853 թ. հունվարի 27-ին ընտրվում է թանգարանի տնօրինությունը հետևյալ կազմով. նախագահ՝ Ե. Ս. Անդրեևսկին (նույն թվականի դեկտեմբերի 16-ի որոշ-

28 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 77.

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում:

32 “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1893”, Тифлис, 1893, с. 17.

33 “Кавказский календарь на 1868 г.”, с. 449. Նաև՝ “Кавказский календарь на 1878 г.”, Тифлис, 1877, с. 281.

34 Жордания Г., նշվ. աշխ., էջ 152-153:

35 “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1896 г.”, Тифлис, 1897, с.12.

36 “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1900 г.”, с. 9.



Տեսարաններ Կովկասյան թանգարանի բակից

մամբ նա ազատվում է աշխատանքից, փոխարենը նշանակվում է Ա. Պ. Նիկոլային), տնօրեններ՝ Վ. Ա. Սոլլոգուբը և Կ. Լ. Չերմակը, քարտուղար՝ Գ. Ա. Տոկարևը (վախճանվել է 1854 թ.)³⁷: 1853 թ. ապրիլին տնօրինության առաջարկով հրավիրված ընդհանուր ժողովը որոշում է Ֆ. Բայերնին տարեկան 300 ռուբ. աշխատավարձով նշանակել թանգարանի վերահսկիչի պաշտոնում³⁸ (վարել է մինչև 1863 թ.):

1855 թ. փետրվարի 15-ին թանգարանի քարտուղար է նշանակվում Ա. Պ. Բերժեն (1828-1886), որը պաշտոնավարում է մինչև 1860 թ. մարտի 23-ը³⁹: Ի դեպ, 1855 թ. ապրիլից օգոստոս նրան փոխարինել է Ռ. Դ. Էրիսթովը, որը ոչ միայն դասակարգել է ազգագրական և պատմական ցուցանմուշները, այլև կազմել թանգարանի իրերի առաջին գրացուցակը⁴⁰:

1855 թ. ապրիլի 14-ին Թիֆլիսից մեկնելու պատճառով թանգարանի ազգագրության բաժնի տնօրենի պաշտոնից ազատվում է Վ. Սոլլոգուբը: Նրա փոխարեն սեպտեմբերի 14-ին նշանակվում է Ի. Ա. Բարթոլոմեյը⁴¹, որը պաշտոնավարել է առնվազն մինչև 1857 թ.⁴²:

1860 թ. մարտի 23-ին թանգարանի քարտուղար է նշանակվում Պ. Ռիսը, որի մահից հետո՝ 1861 թ. գարնանը, պաշտոնավարում է Դ. Ի. Կովալենսկին⁴³:

1866-1903 թթ. թանգարանի տնօրենն էր Գ. Ռադդեն:

1915 թ. թանգարանի ղեկավար անձնակազմը բաղկացած է եղել հետևյալ անձերից՝ գնդապետ Ալ. Ն. Կազնակով (տնօրեն), պետխորհրդական Յու. Ն. Վորոնով (ավագ պահապան) Ն. Ա. Սմիռնով, Ս. Վ. Տեր-Ավետիսյան (վարիչ), Ե. Վ. Պֆիցենմայեր (կրտսեր պահապան), Բ. Հ. Շմիդտ (գրադարանավար)⁴⁴:

Գիտարշավներ. Կովկասյան թանգարանը իրավամբ կարելի էր գիտական լիարժեք հաստատություն համարել, քանի որ, բացի թանգարանային արժեք ներկայացնող հավաքածուների պատշաճ պահպանությունից ու ցուցադրումից, հաստատությունը պարբերաբար ձեռնարկում էր գիտահետազոտական արշավներ:

1859 թ. Ֆ. Բայերնը թանգարանի հանձնարարականով հետազոտական աշխատանքներ է իրականացնում Նոր Բայազետի, Երևանի, Էջմիածնի նահանգներում, Օրդուբադի գավառում, Կուրի ստորին հոսանքի շրջակայքում, ինչպես նաև Իզդիրից ոչ հեռու՝ Արարատի ստորոտի մոտ, հայտնաբերում է սեպագիր արձանագրություն⁴⁵:

1866 թ. Ռադդեն մեկնում է Թալիշ (Լենքորանի գավառ). երթուղին հետևյալն էր. 1866 թ.

37 **Жордания Г.**, նշվ. աշխ., էջ 122, 123:

38 **N. N.**, նշվ հոդվ., էջ 2:

39 **Жордания Г.**, նշվ. աշխ., էջ 123:

40 Նույն տեղում., էջ 134, 144:

41 Նույն տեղում., էջ 129, 142:

42 **Жордания Г.**, նշվ. աշխ., էջ 129:

43 Նույն տեղում., էջ 144:

44 “Кавказский календарь на 1916 г.”, Тифлис, 1915, с. 257-258.

45 **Жордания Г.**, նշվ. աշխ., էջ 152-153:

օգոստոսի 4-ին Ախալցխայից Չատիկ լճի հովիտով մինչև Սուֆլիս գյուղ, ապա՝ Պաման գյուղ, Արտահան (օգոստոսի 8), Կարս գետի վտակ Բերդիկի հովտով Կարս (օգոստոսի 9), Չըղըր լիճ (օգոստոսի 13), Սուլդա գյուղ, Ախալքալաք, Յիսիս-ջվարի լեռնանցքով Բորժոմ⁴⁶:

1867 թ. Գ. Ռադդեի գլխավորությամբ թանգարանն իրականացրել էր ուղևորություն դեպի Արևմտյան Հայաստանի Արտահանի և Կարսի շրջաններ⁴⁷:

1868 թ. երկրաբաններ Ծուլուկիձեն, Խալաթյանցը և Արխիպովը հետազոտել են Նախիջևանի գավառը և Երևանի նահանգը՝ թանգարանը համալրելով 375 նոր գտածոներով⁴⁸:

1868 թ. նոյեմբերին Գ. Ռադդեն իրականացրել է կարճատև ճամփորդություն դեպի Կազրեկ լեռ՝ թանգարանի համար քարայծեր և լեռնային հնդկահավեր ձեռք բերելու նպատակով⁴⁹:

1868-1869 թթ. բեգոսթյան այծեր և վայրի ոչխարներ ձեռք բերելու նպատակով արշավախումբ է մեկնում Արարատ լեռան շրջանը⁵⁰:

Նույն ժամանակաշրջանում երկրաբաններ Ծուլուկիձեն, Խալաթյանցը և Արխիպովը շարունակում են հետազոտական աշխատանքներ իրականացնել Դարալագյազի շրջանում և Չանգեզուրի գավառում՝ թանգարանը հարստացնելով շուրջ 598 գտածոներով⁵¹:

1870 թ. Գ. Ռադդեն և Գ. Սիվերսը հետազոտել են Լենքորանի գավառը և Կասպից ծովի արևելյան ափը՝ Կրասնովոդսկի մերձակայքը⁵²:

Նույն թվականին երկրաբաններ Ծուլուկիձեն, Արխիպովը ու Կրաֆտը հետազոտական աշխատանքներ են իրականացրել Բարփի նահանգում և թանգարանին հանձնել կավճի ու եր-



Ուվարով ամուսինները և Կովկասյան թանգարանի հիմնադիր տնօրեն Գուստավ Ռադդեի հուշարձանը

46 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 80-81.

47 “Краткий обзор путешествия Г. И. Радде в турецкую Армению в 1867 году”. – “Кавказ”, 1868, № 71, էջ 3-4: Տե՛ս նաև՝ “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет существования с 1-го января 1867 по 1-го января 1892 года”, составитель д-р Г. Радде, Тифлис, 1891, с. 54.

48 “Краткий путеводитель по Кавказскому музею”, составитель Г. И. Радде, Тифлис, 1881, с. 3; 1895, с. 9; 1903, с. 7.

49 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 81.

50 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 54. Նաև՝ “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 81.

51 “Краткий путеводитель по Кавказскому музею”, составитель Г. И. Радде, Тифлис, 1881, с. 3; 1885, с. 4; 1895, с. 9-10; 1903, с. 7.

52 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 81-82.

53 “Краткий путеводитель по Кавказского музею”, 1881, с. 4.



Կովկասյան թանգարանի կենդանաբանությանը նվիրված սրահները

րորդական նստվածքների ժամանակաշրջանի քարամնացուկներ⁵³:

1871 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին Գ. Ռադդեի և Գ. Միվերսի ղեկավարությամբ թանգարանի արշավախումբը հետազոտական աշխատանքներ է իրականացնում Արաքս գետի միջին հոսանքի շրջանում, Երևանում, Նախիջևանում՝ մինչև Բիչանագ, Մեղրիի հովտում, Կապուտջուղ լեռան վրա (հունիսի 15), Արցախ-Սյունիքում, Ղարաբաղի լեռնաշղթայով Դարալագյազ (Վայոց Ձոր), Իստի-սուի հանքային տաք աղբյուրները, Նոր Բայազետ (Գավառ), Չիբուխլու (Ծովագյուղ), Դարաչիչակ (Ծաղկածոր), ապա բարձրանում են Արագածի գագաթը (հուլիս), այնուհետև Էջմիածին, Եփրատի ձախ ափին՝ Ուչ-քիլիսա վանքը, օգոստոսին՝ Մեծ և Փոքր Մասիսները (առաջինը մինչև 14.500 ֆուտ բարձրությունը, իսկ երկրորդը՝ մինչև գագաթը)⁵⁴:

1874 թ. թանգարանը Գ. Ռադդեի և Գ. Միվերսի գլխավորությամբ արշավախումբ էր ուղարկել Բարձր Հայք՝ մինչև Էրզրում և Բյուրակնի (Բինգյուլ) լեռները⁵⁵:

1875 թ. Բարձր Հայք էր մեկնել մի այլ արշավախումբ, որի կազմում եղել են Գ. Միվերսը, Օ. Շնեյդերը, Մուրավիցը, Ֆիկսեն և դեսպան Բյունինգը⁵⁶:

Մցխեթից ոչ հեռու՝ Արագվա գետի աջ ափին՝ Սամտավրո կուսանաց վանքի մոտ ճանապարհ բացելու ժամանակ հայտնաբերվել է դամբարանադաշտ, որտեղ 1876-ից պեղումներ է իրականացրել Ֆ. Բայերնը՝ հետազոտելով՝ շուրջ 300 դամբարան: Հայտնաբերված հնագիտական գտածոների զգալի մասը (բրոնզե և երկաթե իրեր, դրամներ, պերճանքի առարկաներ) փոխա-

54 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 54. Նաև՝ “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1897 и 1898 гг.”, Тифлис, 1898, с. 18-19. “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 82-83.

55 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 55. Նաև՝ “Коллекции Кавказского музея”, обработанная совместно съ учеными специалистами и изданныя Г. И. Радде, т. V, Тифлис, 1902, с. 85-92.

56 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 55. Նաև՝ **Ղարիբջանյան Ս.**, Գուստավ Ռադդե.– «Ավարայր», 1997, № 2, էջ 26:

57 “Коллекции Кавказского музея”, с. 62-68.



Կովկասյան թանգարանի կենդանաբանությանը նվիրված սրահները

դրվել և պահվել են Կովկասյան թանգարանում⁵⁷:

Մցխեթի մոտ հայտնաբերվել է նաև հունարեն արձանագրությամբ սալ:

1877 թ. հետազոտվել էր Կուրի ստորին հովիտը:

1879 թ. նոյեմբերի 1-ին Գ. Ռադդեն մեկնել է Լենքորան. ուսումնասիրել է Կուրի աջափնյա հատվածը, Աղստաֆան, Չեգամից Գետաբեկ, Քոչկար լեռը, Կեպաս և Մռավ սարերը, Սլավյանկա գյուղը, Շամքորի հովիտը, Գանձակը, Մինգեչաուրը, Կուրի ձախ ափը⁵⁸:

1885 թ. Գ. Ռադդեի գլխավորությամբ հետազոտվել են Նուխիից (Շաքի) մինչև Շահդադ ընկած հատվածը, Սամուր գետի ակունքի շրջանը, Դուլտիդաղն ու Բոզոսը⁵⁹:

1890 թ. Գ. Ռադդեն հետազոտական աշխատանքներ է իրականացրել Ղարաբաղի տարածքում⁶⁰:

1896 թ. հունիսի 21-ից օգոստոսի 11-ը թանգարանի վերահսկիչ Քյոնիգը հետազոտել է Արաքսի վերին հոսանքի շրջանը⁶¹:

Թանգարանի նյութերի համալրումը Հայաստանի հնավայրերի գտածոներով. 1857 թ. թանգարանի նյութերը համալրվում են Երևանի նահանգից հայտնաբերված 349 արձաթե հին դրամներով⁶²:

1859 թ. Ֆ. Բայերը հնագիտական գտածոներ, ինչպես նաև մի օրորոց (Արարատից էր բերված) է հանձնել թանգարանին⁶³: Նյութերի հիմնական մասը բերված էր «Ռեդկին-ճամբար» («Редкинъ-лагерь») հնավայրից, որը գտնվում էր Աղստև գետի հովտում՝ Դիլիջանի մերձա-

58 “Коллекции Кавказского музея”, т. VI, с. 104.


59 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 55. Նաև՝ **Ղարիբջանյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 26: 60 **Ղարիբջանյան Ս.**, նշվ. հոդվ., էջ 27:

61 “Отчетъ по Кавказскому музею и Тифлисской публичной библиотеке за 1896 г.”, Тифлис, 1897, с. 8.

62 **Жордания Г.**, նշվ. աշխ., էջ 129:

63 Նույն տեղում, էջ 153:

64 “Краткий путеводитель по Кавказскому музею”, составитель Г. И. Радде, Тифлис, 1885, с. 76; 1895, с. 80-81; 1903, с. 50.



Կովկասյան թանգարանի կենդանաբանությանը նվիրված սրահները

կայքում⁶⁴: Նույն թվականին Ֆ. Բայերնը հետազոտել է նաև Դիլիջանի դամբարանից ոչ հեռու լեռներում գտնող «Գոմեշ» անվամբ քարայրը. կավե գտածոն հանձնվել է թանգարան⁶⁵:

1871 թ. հնագետ Ա. Երիցյանցի ջանքերով թանգարանին են հանձնվել Լոռուց հայտնաբերված մի շարք գտածոներ⁶⁶:

1874 թ. Գ. Ռադդեի անձնական ծախսով Հին Ջուղայից գնվել և թանգարան են փոխադրվել մոտ 10 խաչքարեր ու տապանաքարեր⁶⁷: Ռադդեն Թիֆլիս է փոխադրել նաև Սևանա լճափից գտնված մի սեպագիր արձանագրություն⁶⁸: Կարսի մարզի չերքեզաբնակ Վերին Սարիղամիշ գյուղի մոտից գտնված մեկ սեպագիր արձանագրություն էլ Թիֆլիս է փոխադրել Ա. Երիցյանը⁶⁹:

1880 թ. թանգարանին հնագիտական գտածոներ են հանձնվել Ալեքսանդրապոլից⁷⁰:

Գեներալ-լեյտենանտ Վ. Ա. Կոմարովի ջանքերով թանգարանին հանձնվել են Սարիղամիշից հայտնաբերված սեպագիր արձանագրությունները⁷¹:

Գ. Ռադդեի ջանքերով թանգարան են հասցվել հնություններ Կողբից և Նախիջևանից⁷²:

Լուսնեկվիստը թանգարանին է հանձնել Կիլիկյան Տավրոսից հայտնաբերված գտածոներ⁷³:

Արժրունին թանգարանին է փոխանցել Նոր-Բայազետից գտնված սեպագիր արձանագրությունը, իսկ Վալուևը՝ նյութեր Օլթիից⁷⁴:

1879 թ. Ա. Ուվարովը, Պ. Ուվարովան և Ա. Երիցյանը պեղել են Արմավիրի տարածքից 3 դամ-

65 “Коллекции Кавказского музея”, т. V, с. 61-62.

66 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 20. Նաև՝ “Краткий путеводитель по Кавказскому музею”, составитель Г. И. Радде, Тифлис, 1881, с. 54; 1895, с. 81.

67 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 22.

68 Համբո, Հինգերորդ հնագիտական ժողովը Թիֆլիսում.– «Փորձ», 1881, № 1, էջ 89:

69 Նույն տեղում:

70 “Краткий очерк истории развития Кавказского музея в первые 25 лет...”, с. 20.

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում:

74 Նույն տեղում, էջ 21:

75 “Коллекции Кавказского музея”, т. V, . 128-130.



Կովկասյան թանգարանի կենդանաբանությանը նվիրված սրահը

բարան և հնագիտական 53 գտածոները հանձնել թանգարանին⁷⁵:

1880 թ. Ա. Ուվարովը Աշտարակ և Օշական գյուղերի միջև՝ «Արևի տափաստան» կոչվող տարածքում պեղել է 10 դամբարան, որոնցից միայն մեկի գտածոներն են փոխադրվել և պահպանվել Կովկասյան թանգարանում⁷⁶:

1892-1894 թթ. Ելիզավետպոլի արական գիմնազիայի ուսուցիչ Է. Ռյուլերը պեղումներ է իրականացրել Շուշիի (Ասկերանի շրջ., գ. Խոջալու) ու Ջվանշիրի գավառներում (Մարտակերտի շրջ., գ. Առաջածոր). հայտնաբերված հնագիտական 50 միավոր գտածոները հանձնել են թանգարան⁷⁷:

1896 թ. գնդապետ Պ. Վ. Չարկովսկին առաջինն է, որ պեղումներ է կատարել Երևանի խանության Թագաբեդնի (Կարմիր բերդը՝ Կոտայքի մարզի Նաիրիի ենթաշրջանի Ջովունի գյուղի մոտ) միջին բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների մի քանի դամբարանները և հնագիտական 65 միավոր գտածո հանձնել թանգարանին⁷⁸:

Եղիազարյանցը թանգարանին է հանձնել Երևանի նահանգի Շոռ գյուղից հայտնաբերած հնագիտական 3⁷⁹, Հովակիմյանցը՝ Երևանի նահանգից հայտնաբերած 15⁸⁰, իսկ Շուլցը՝ Ելիզավետպոլի նահանգից հայտնաբերած բրոնզե 6 գտածոներ⁸¹:

Թանգարանին են հանձնվել նաև Անենֆելդ գյուղից (Շամխորի շրջան) հայտնաբերված պղնձե և բրոնզե իրեր⁸²:

Խարիտոնովը Ջագիլ (Փիր) գյուղի (Դաշլեսանի շրջան) շիրի հանքերը մշակելու ժամանակ

76 Նույն տեղում, էջ 132-133:

77 “Коллекции Кавказского музея”, т. V, с. 113-117.

78 Նույն տեղում, էջ 119-122:

79 Նույն տեղում, էջ 123:

80 Նույն տեղում, էջ 123-124:

81 Նույն տեղում, էջ 123-125:

82 Նույն տեղում, էջ 125:

83 Նույն տեղում, էջ 126:



Դիլիջանի «Ռեդկին-Ճամբար» հնավայրից հայտնաբերված հնագիտական իրերից

հայտնաբերված հնագիտական գտածոները հանձնել է Կովկասյան թանգարանին⁸³:

Կովկասյան թանգարանին են հանձնվել Հայաստանի տարբեր հնավայրերում Ն. Մառի իրականացրած պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոները (ցավոք, նշված չեն հնավայրերի անունները)⁸⁴:

ԺԹ դարավերջին Կարսի մարզի Կաղզվանի գավառի (օկրուգի) Մեջիթլի գյուղից 5 վերստ հեռավորության վրա՝ Սողանլու լեռնաշղթայի արևելյան լանջին՝ Սարիղամիշից Քարաքուրդ տանող ճանապարհի շինարարության ժամանակ հայտնաբերվել է դամբարան, որի հնագիտական աղքատիկ նյութերն ինժեներ Ջեզեմանը փոխանցել է թանգարան⁸⁵:

Տեկոր գյուղում Պոլյակովի իրականացրած պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոները հանձնվել են թանգարանին⁸⁶:

1893 թ. հնագետ Բելլին հաջողվում է վերծանել թանգարանում պահվող Սարիղամիշից բերված սեպագիր արձանագրությունը⁸⁷:

1897 թ. Կայսերական հնագիտական հանձնաժողովը թանգարանին է նվիրել Հայաստանի տարածքում հայտնաբերված հնագիտական իրեր, իսկ Ֆ. Կավրայսկին՝ Սևանա և Չրլոր լճերի առափնյա քարերի նմուշներ, Ա. Շելկովնիկովը՝ Ջվանշիրի գավառից հնագիտական գտածոներ, Կարսի երկաթուղագծի կառուցման աշխատանքների պատասխանատուից՝ Խրամ գետի մոտ՝ Էմիր գյուղի մերձակայքում հայտնաբերված սուրը⁸⁸:

1905-1906 թթ. Սևանա լճի հարավային ափերի մոտ կատարած պեղումների արդյունքում

84 Նույն տեղում, էջ 127:

85 Նույն տեղում, էջ 131:

86 Նույն տեղում:

87 «Отчетъ по Кавказскому музею и Тифлиской публичной библиотеке за 1893 г.», с. 19.

88 «Отчетъ по Кавказскому музею и Тифлиской публичной библиотеке за 1897 и 1898 гг.», с. 20-21.



Կովկասյան թանգարանի ազգագրական նյութերին նվիրված սրահներից մեկը

հայտնաբերված մի շարք բրոնզե իրեր, որոնք համարվել էին ուրարտական մշակույթի նմուշներ, Ե. Լալայանը հանձնել էր Կովկասյան թանգարանին⁸⁹:

1914 թ. կապիտան Պ. Ֆ. Պետրովը Սուրմալու գավառի Մալաքլու գյուղի մոտ (Իգդիրից 8 վերստ հեռու) պեղել էր 13 դամբարան և թանգարան հանձնել հայտնաբերած հնագիտական 159 միավոր գտածոները⁹⁰:

Նույն թվականին թանգարանի հանձնարարականով նկարիչ Ն. Վ. Կելչևսկին կազմել էր Արաքսի ձախ ափին՝ Ջուղայից արևմուտք՝ հին կամրջի դիմաց գտնվող «Գյուլիստան» կոչվող հնավայրի հատակագիծն ու լուսանկարել այն: Թանգարանին էր հանձնվել 13 լուսանկարների ապակյա նեգատիվները⁹¹:

Նույն թվականին Ս. Տեր-Ավետիսյանը պեղում է Չեզամի (Չակամ) մոտ գտնվող «Ղարաուլ-դաղ» բլրի դամբարանները և բացահայտում 3 կարգի թաղումներ: Գտածոները փոխադրվում են թանգարան⁹²: Ս. Տեր-Ավետիսյանը պեղում է նաև Օրդուբադի տեղամասի «Խարաբա-Գիլան» անվամբ հայտնի հնավայրը, որը, ինչպես պարզվում է, քաղաքատեղի էր⁹³:

Նույն թվականի աշնանը Ս. Տեր-Ավետիսյանը նկարիչ Ն. Վ. Կելչևսկու հետ ուսումնասիրում է Չըրըր գավառի Դաշ-քյոբփի գյուղի մոտ գտնվող սեպագիր արձանագրությունը: Պատրաստ-

⁸⁹ Казнаков А. Н., Заметка о древних бронзах из Гокчинских могилников, «Известия Кавказского музея», том XI, вып. 1-2, Тифлис, 1917, с. 25. Նաև՝ Մելիք-Փաշայան Կ., Երվանդ Լալայան.– «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 37:

⁹⁰ «Отчет по Кавказскому музею за 1914 год», Тифлис, 1917, с. 21, 23. Տես նաև Գիտակ, Չագեամի հնութիւնները.– «Մշակ», 1914, № 123, էջ 4:

⁹¹ «Отчет по Кавказскому музею за 1914 год», с. 21, 23.

⁹² Նույն տեղում, էջ 21:

⁹³ Նույն տեղում, էջ 22:

⁹⁴ Նույն տեղում:




Կովկասյան թանգարանի ազգագրական նյութերին նվիրված սրահները



Կովկասյան թանգարանի ազգագրական նյութերին նվիրված սրահները



Կովկասյան թանգարանի ազգագրական նյութերին նվիրված սրահները



Յնագետ Ալեքսանդր Երիցյանը



Կովկասյան թանգարանի հնագիտական բաժնի վերջին հայազգի ավագ պահապան Սմբատ Տեր-Ավետիսյանը

վում է վերջինիս էստամպն ու լուսանկարը⁹⁴:

Նույն ժամանակ Ա. Վրույրը թանգարանին է հանձնում Անիում կատարած 50 լուսանկարների ապակե նեգատիվները⁹⁵:

1915 թ. նոյեմբերի 15-ից մինչև հունվարի վերջը հնությունների ուսումնասիրության առաջադրանքով Վանի շրջան է մեկնել (Զուլֆա-Խոյ-Սարայ-Վան երթուղով) թանգարանի ավագ վերահսկիչ Ս. Տեր-Ավետիսյանը⁹⁶: Նրան ուղեկցել է նաև կաթողիկոսի պատվիրակը: Ճամփորդության ընթացքում Ս. Տեր-Ավետիսյանը հետազոտել է Վանի միջնաբերդը, Վարագի, Աղթամարի, Լիմի, Կտուցի վանքերը, հավաքել է շուրջ 1000 հայերեն և մի քանի տասնյակ արաբերեն, թուրքերեն ձեռագրեր, կատարել է բազմաթիվ հուշարձանների չափագրումներ և լուսանկարահանումներ⁹⁷:

1916 թ. ամռանը ուսումնասիրություններ էին կատարվել Վանում: Մասնավորապես հետազոտվել էր Վանի բերդի պարիսպների ներսում գտնվող քարանձավը⁹⁸:

1916 թ. Սմբատ Տեր-Ավետիսյանը Բիթլիսում հայտնաբերում է Սշո Առաքելոց վանքի դուռը և հանձնում թանգարանին⁹⁹:

Թանգարանում են պահվել Ախալցխայից, Շամախիից և Շուշիից բերված պղնձե ամաններ, ինչպես նաև արծնապատ արծաթե իրեր Շուշիից, կնոջ կրծքագարդեր՝ Նուխիից, մետաքսե ջե-

95 Նույն տեղում, էջ 23:

96 Սմբատ Տեր-Ավետիսյանը թանգարանի հնագիտական բաժնի ավագ վերահսկիչ էր նշանակվել 1914 թ. օգոստոսի 1-ին այդ պաշտոնում փոխարինելով գիտությունների կայսերական ակադեմիայի անդամ Յու. Ն. Վորոնովին (“Отчет по Кавказскому музею за 1914 год”, Тифлис, 1917, с. 3):

97 “Кавказ”, 1916, № 62, էջ 3-4:

98 **Казнаков А. Н.**, Пещера с тайниками в Ванской цитадели.— “Известия Кавказского музея”, т. XI, вып. 1-2, Тифлис, 1917, с. 28-32.

99 **Тер-Аветисян С.**, Резная дверь 1134 г. из окрестностей гор. Муша.— “Известия Кавказского историко-археологического института”, Тифлис, 1925, с. 129-133.

ջիւմների հարուստ ընտրանի՝ Ղարաբաղից, Երևանի մզկիթից՝ ջնարակած աղյուսներ:

Թանգարանի ֆոնդերը լրացվում և հարստացվում էին մեծ արագությամբ: Հայտնի է, որ եթե 1881 թ. թանգարանն ունեցել է 28.000 ցուցանմուշ, ապա 1908 թ. հավաքածուն կազմել է 180.000¹⁰⁰:

Թանգարանի գործունեությունը 1907-1919 թթ. 1907 թ. թանգարանն այնքան էր հարստացել նոր նյութերով, որ արդեն զգացնել էր տալիս կառույցի անձկությունը և փոքրությունը: Նոր շենքի կառուցումը, սակայն, կյանքի չկոչվեց ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով: Կառույցի համար նախատեսվել էր թանգարանի շենքը վաճառել, ապա մատչելի գնով գնել նոր հողամաս, որտեղ հնարավոր կլիներ կառուցել ընդարձակ շինություն¹⁰¹:

1908 թ. թանգարանի տնօրենն էր Ալեքսանդր Նիկոլակիչ Կազնակովը, օգնականը՝ Ռիխարդ Գ. Շմիդտը, վերահսկիչը՝ Արկադի Իվանովիչ Մոժնակսկին¹⁰²:

1919 թ. Կովկասյան թանգարանը վերանվանվել և ստացել է Վրաստանի պետական թանգարան անունը¹⁰³:

Թանգարանի ազգայնացումը և հայկական մշակութային արժեքների բռնագրավումը. 1919 թ. հունվարին Վրաստանի կառավարությունը հայտարարում է Կովկասյան թանգարանն ազգայնացնելու մասին և, փաստորեն, բռնագրավում հավաքածուների 2/3-րդ մասը կազմող հայ մշակույթի բազմաթիվ արժեքները: Կայացված որոշումն իրապես անօրինակ էր և պարզորոշ ներկայացնում էր մենշևիկյան Վրաստանի կառավարության զավթողական նկրտումները: Օգտվելով միայն հաստատության՝ Թիֆլիսում գտնվելու հանգամանքից, ազգայնացվում է մի թանգարան, որի պարունակության մեծ մասը որևէ առնչություն չունի վրաց մշակույթի հետ և մանավանդ նյութերի մի զգալի մասն էլ պատերազմի պատճառով էր միայն ժամանակավորապես թանգարան փոխադրվել: Եղելության առթիվ խիստ ուշագրավ է թանգարանի ավագ վերահսկիչ՝ Սմբատ Տեր-Ավետիսյանի՝ 1919 թ. մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին հղած հետևյալ զեկուցագիրը.

«Կովկասեան թանգարանը - մեր ազգային յիշատակարանների գրաւումը

Ա.

Ի նկատի ունենալով, որ հայ-վրացական խորհրդածողովի քննութեան միւթ պիտի դառնան ռուսական պետական այն հաստատութիւնները, որոնք ընդհանուր երկրային նշանակութիւն ունին ամբողջ Կովկասի համար, բայց գտնուելով Թիֆլիսում գրաւուել են վրաց կառավարութեան կողմից, անհրաժեշտ ենք համարում Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այդպիսի մի ընդհանուր նշանակութիւն ունեցող երկրային հաստատութեան վերայ, որը վրաց կառավարութիւնը ազգայինացնելով դրել է կորստեան ճանապարհի վերայ. խօսքս վերաբերում է Կովկասեան թանգարանին:

Կովկասեան թանգարանը Կովկասի միով գիտական հաստատութիւն էր, որ նպատակ ուներ ժողովելու և ուսումնասիրելու ամբողջ Կովկասի, և հարևան երկրների պատմութիւնը, ազգագրութիւնը, բուսական և կենդանական հարստութիւնները և հանքաբանութիւնը:

Թանգարանը հիմնուել է 1865 թ. մեծ իշխան Սիխայիլ Նիկոլակիչի ջանքերով և պահուել պետական և մասամբ Կովկասեան զեմովի տուրքերով: 1913 թ. թանգարանը դարձաւ գիտութեանց ճեմարանի ֆիլիալ բաժանմունքը և ընդլայնեց իր ծրագիրը ստանալով պետութիւնից նոր միջոցներ, կանոնադրութիւն և մասնագետների նոր շտատ, ընտրուած և հաստատուած գիտութեանց ճեմարանի կոնֆերենսիայի կողմից: Նոյն նպատակով Գոլովինսկի պրոսպեկտի վերայ պալա-

100 Джавахишвили А. И., Краткий обзор прошлой и будущей деятельности Государственного Музея Грузии им. акад. С. Н. Джанашиа. — «ՀՄՄՌ-ԳԱ Տեղեկագիր», 1950, № 8, с. 111.

101 Кобяков Юр., 62վ. հոդվ.:

102 Сатуни К., Деятельность этнографического отделения Кавказского музея.— “Кавказ”, 1908, № 96, с. 3. “Памятная книжка Эриванской губернии за 1908 г.”, под редакцией В. Е. Васильева, Эривань, 1908, с. 13.

103 Джавахишвили А. И., 62վ. հոդվ., էջ 111.

տի դիմաց շինուեց մի հսկայական շինութիւն:

Թանգարանը յիսուն տարուայ իւր գոյութեան ընթացքում ժողովել և պահպանել է գիտութեան համար բազմաթիւ ժողովածուներ, որոնցից շատերը Կովկասի բազմալեզու ժողովրդների ազգային անկապտելի սեպհականութիւնն են կազմում իբրեւ արդիւնք նրա բազմադարեան գոյութեան և կուլտուրայի, որովհետև Կովկասի բոլոր ծայրերից՝ Կուբանից, Թերեքի շրջանից, Ադրբեջանից, Հայաստանից, Վրաստանից, Սև ծովի ափերից, Պարսկաստանից և վերջապէս նախկին Տաճկական Հայաստանից այդտեղ են ժողոված վերոյիշեալ երկրների և ժողովուրդների ազգային պատմական ու ազգագրական յիշատակարանները:

Այդ յիշատակարանների մի ստուար մասը պատկանում է հայ ժողովրդին ու կազմում նրա դարաւոր գոյութեան սրբութիւն սրբոցը: Միայն այդ տեսակետից նայելով գործի վերայ Կովկասեան թանգարանը հարստացրել են իրենց նուէրներով, ժողովածուներով և մասնագիտական ուսումնասիրութիւններով շատ հայեր. առանձնապէս յիշելու արժանի են. Ալէքսանդր Երիցեան (հնագետ), Բ. Շելկովնիկով (բնագետ), Ե. Լալայեան (ազգագրագետ և նուաստս իբրև պատմաբան-հնագէտ): Սոցա ենք պարտական, որ հնագիտական բաժնի երկու երրորդ մասը պատկանում է Հայաստանին:

Հնագիտական բաժինը աւելի հարստացաւ հայկական յիշատակարաններով, երբ 1914 թ. գիտութեանց ճեմարանի ընտրութեամբ ես հրաւիրուեցի նոյն բաժնի համար աւագ վերահսկիչի պաշտօնով: Ներկայ պատերազմի հենց սկզբից գիտութեանց ճեմարանի յանձնարարութեամբ ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով ճանապարհորդելով Տաճկական Հայաստանի նահանգները, կորստից ազատելու նպատակով ժամանակաւորապէս մեր շատ պատմական յիշատակարանները փոխադրեցի Կովկասեան թանգարանը իբրև ապահով տեղ ապագայում իրենց տեղերը դարձնելու մտքով: Այդ իրերից յիշատակութեան արժանի են.

1. Սեպագրերի հարուստ ժողովածու Վանի շրջանից:
2. Հայկական և հայագիտական մի ամբողջ գրադարան ժողոված իմ և իմ աջակից հայերի ջանքերով Էրզրումի շրջանում:
3. Եկեղեցական և պատմական իրեր Վանից և Տարօնից. սրանց թում և Առաքելոց վանքի հոշակաւոր քանդակագործ դուռը, իսկած տաճիկներից Բիթլիսում ու փոխադրած իմ սեպհական միջոցներով:

Թանգարանի ազգագրական մասը բացի Կովկասի հայկական գաւառներից պարունակում է նիւթեր նաև Վանի, Բիթլիսի հայոց կեանքին և կենցաղին վերաբերեալ:

Թանգարանին կից է մի շատ հարուստ, միակը ամբողջ Կովկասում գրադարան, ուր հաւաքած են կովկասագիտութեան վերաբերեալ թանկագին, այժմ սպառուած հրատարակութիւններ: Սա միակ գրադարանն է, ուր կարելի է գտնել Կովկասում տպուած բոլոր հայերէն գրքերը:

Բուսաբանական ու կենդանաբանական բաժինները միանգամայն դրուած են գիտական լաւ հիմքերի վերայ:

Թէ գիտական և թէ նիւթական մեծ արժէք ունի դրամագիտական բաժինը:

Բ.

Անցեալ տարուայ յունիսից Վրաց կառավարութիւնը սկսեց խառնուել թանգարանի ներքին գործերում: Մի ամիս առաջ էլ յայտարարեց, որ Կովկասեան թանգարանը ազգայինացնում է դարձնելով Վրաց ազգային թանգարան, որպիսի նպատակով Վրաց լուսաւորութեան նախարարութիւնը մշակում է մասնագետների նոր շտատ և կանոնադրութիւն: Հէնց նոյն ժամանակ պաշտօնից արձակեցին ինձ զրկելով դրամական վարձատրութիւնից և յետ չըտալով այն իրերը, որ իբրեւ աւանդ Հայաստանից ես փոխադրել էի Կովկասեան թանգարանը:

Այսպիսով կատարուեց մեր ազգային յիշատակարանների բռնի յափշտակութիւն և նուաստս, որ կեանքիս գնով պատերազմի ընթացքում հարստացրել էի այդ թանգարանը դուրս շարտուեցի իբրև ոչ ցանկալի տարր: Այսպէս վարուեցին նաև այն ռուս մասնագետների հետ, որոնք թանգարանը համարում են ոչ վրացական, այլ համակովկասեան երկրային էքստերիտորեալ հաստա-



«Արմազի» թանգարանում հանգրվանած հայկական հավաքածուներից

տուրքին:

Բողոքելով այդպիսի բռնի յափշտակութեան դէմ, առաջարկում են Վրաց կառավարութիւնից պահանջել.

1. Կամ թողնել թանգարանը անձեռնմխելի իւր նախկին կազմով ու շտատով, որ հաստատուած է ակադեմիայից և վերահսկողութիւնը յանձնել այդ հաստատութեան մէջ մաս ունեցող կառավարութիւններից նշանակած անձանց, համարելով թանգարանը էքստերիտորեալ երկրային գիտական հաստատութիւն, որի անդամահատելը ցանկալի չէ:

2. Եւ կամ բաժանել բոլոր գոյքը:

Վերջին դէպքում մեր կառավարութեան և Ձեր վերայ իբրև այդ կառավարութեան ներկայացուցիչների ընկնում է մի մեծ պարտականութիւն միջոցներ ձեռք առնել օր առաջ ազատելու մեր ազգային գոյքը յափշտակելուց և փոխադրել մի ատելի ապահով տեղ դուրս բերելով այն բոլորը, ինչ առնչութիւն ունի հայոց կեանքի հետ: Յետաձգել կամ ձգձգել այս խնդիրը կը նշանակի միջոց տալ ուրիշներին վատնելու մեր ազգային սեպհականութիւնը, որի հետ մենք կապուած ենք դարերով, չէ՞ որ այդ իրերը մեր գոյութեան դոկումենտներն են:

Չը պէտք է մոռանալ, որ թանգարաններ կազմում են տասնեակ տարիների յամառ ջանքերից



«Արմազի» թանգարանում հանգրվանած հայկական հավաքածուներից

յետոյ ու կլանում են հսկայական գումարներ, այնինչ՝ մենք Կովկասեան թանգարանում ունենք մեր կուլտուրան ներկայացնող այնպիսի ժողովածուներ և իրեր, որ ուրիշ տեղ ոչ մի գնով ձեռք բերել չի կարելի:

Կէս տարուայ փորձը ցոյց տուեց, որ Վրաց կառավարութիւնը անձեռնհաս է կառավարելու և պահպանելու այդպիսի մի գիտական հաստատութիւն և որ վրացի դիրեկտորի օրով փչացաւ տարիների ընթացքում ժողոված բնագիտական ժողովածուի մի մասը:

Ինձ յայտնի է նոյնպէս, որ թանգարանի իրաւական տէրը Ռուսական գիտութեանց ճեմարանը ոչ մի կերպ համաձայն չէ թանգարանի ազգայինացման, բայց տիրող քաղաքական դրութեան շնորհիւ հնարատրութիւն չունի բողոքելու և պաշտպանելու թէ իրա, թէ իւր կողմից ընտրած մասնագետների իրաւունքը: Այդ պարտականութիւնը ընկնում է Կովկասեան հասարակապետութիւնների վերայ:

Ես խնդրում եմ Ձեզ, պարոններ մի թոյլ տաք մեր աչքի առջև փորելու ամբողջ Կովկասի այդ միով բարձր գիտական հաստատութեան հիմքը: Չէ՞ որ ապագայ Հայաստանը չէ կարող ապրել առանց այդպիսի կուլտուրական հաստատութեան:

Ներկայ յայտարարութեամբ ես կամենում եմ կատարել իմ բարօյական պարտականութիւնը



«Արմազի» թանգարանում հանգրվան գտած հայկական հավաքածուներից

և դուրս գալ ապագայում անպատասխանատու ազգային գոյքի յափշտակութեան դեպքում:

Սմբատ Տեր-Աւետիսեան

Նախկին առագ վերահսկիչ Կովկասեան թանգարանի:

Յ. Գ. Ներկայ գրութիւնը հրատարակելու դեպքում, ես խնդրում եմ գաղտնի պահել իմ ստորագրութիւնը ու նույն մտքով փոփոխութիւն մտցնել նիւթի մէջ:

1919 թ. 1 մարտի Թիֆլիս»¹⁰⁴:

Հիմք ընդունելով Ս. Տեր-Ավետիսյանի զեկուցագիրը՝ Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը 1919 թ մարտի 25-ին Վրաստանի ԱԳ նախարարին հղել է հետևյալ գրությունը.

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 28, ք. 9-10:



«Արմազի» թանգարանում հանգրվանած հայկական հավաքածուներից

“Министру Иностранных Дел Грузинской Республики

25 марта 1919 г.

№ 825.

Получены сведения, что Правительство Грузии постановило переименовать Кавказский Музей в Грузинский и принять его в свое обладание и распоряжение.

Кавказский Музей - одно из тех установлений, принадлежность и участь которого не может подлежать одностороннему решению Грузинского Правительства. Неговоря о России, который в лице ее Правительства и Академии Наук несомненно должно принадлежать в этом вопросе первенствующее и решающее слово, с существованием Кавказского Музея у Республики Армении связаны слишком ценные интересы, чтобы можно было игнорировать голос ее Правительства при распоряжении означенным культурным научным учреждением.

Правительство Армении хочет надеяться, что Правительство Грузинской Республики



«Արմազի» թանգարան. Մարիամ Մելիք-Աղամալյանի բեկորված տապանաքարը (1997 թ., լուս. Սարգիս Դարչինյանի)

примет все меры к ограничению неприкосновенности и сохранности Кавказского Музея со всем достоянием на прежних основаниях впредь до разрешения вопроса о новом положении Музея при участии как Российской Академии Наук, так и представительства Республики Армении.

Министр Иностранных Дел Республики Армении
 Генеральный секретарь
 Сь подлинным верно: Правитель Канцелярии»¹⁰⁵.

/подпись/ С. Тигранянъ
 /подпись/ А. Теръ-Акопянь

Թարգմ.

«Վրաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին

25 մարտի 1919 թ.

№ 825

Ստացվել է տեղեկություն, որ Վրաստանի կառավարությունը որոշել է Կովկասյան թանգարանը վերանվանել Վրացական, և վերցնել իր տնօրինության և իրավասության ներքո:

Կովկասյան թանգարանն այն հաստատություններից է, որի պատկանելությունն ու նշանակությունը չի կարող ենթարկվել վրացական կառավարության միակողմանի որոշմանը: Չխտելով Ռուսաստանի մասին, որին ի դեմս իր կառավարության և գիտությունների ակադեմիայի, այս հարցում, անկասկած, պետք է վերապահվի առաջնային և վճռական խոսքը, Կովկասյան թանգարանի գոյության հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է չափազանց թանկ հետաքրքրություններով, որպեսզի հնարավոր լինի անտեսել նրա կառավարության ձայնը նշված գիտական հաստատության տնօրինման գործում:

Հայաստանի կառավարությունը ուզում է հուսալ, որ Վրաստանի Հանրապետության կառավարությունը ձեռք կառնի բոլոր միջոցները սահմանելու Կովկասյան թանգարանի անձեռնմխելիությունը, ձեռքբերումների պահպանումը նախկին հիմունքներով մինչև թանգարանի նոր կարգավիճակի հստակեցումը, ինչպես Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցությամբ:

*Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար (ստորագրություն) Ս. Տիգրանյան
 Գլխավոր քարտուղար (ստորագրություն) Ա. Տեր-Հակոբյան»:*

Յավոք, քաղաքական լարված մթնոլորտում հայկական կողմի քայլերը նպատակին չեն հասնում, իսկ անկախ Հայաստանի իշխանություններին փոխարինած Խորհրդային Հայաստանի պատասխանատուները համակված «եղբայրական» զգացումներով, ընդհանրապես մոռացության տվեցին թանգարանում բռնագրավված ազգային հարստությունները հայրենիք վերադարձնելու խնդիրը:

Թանգարանի գործունեությունը 1940-ական թվականներից հետո. 1941 թ. Կովկասյան թանգարանն անցել է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ենթակայության ներքո: Այդ ժամանակ թանգարանն արդեն բաղկացած էր 7 բաժնից (ձեռագիր մատյաններ, պատմական, հնագիտական, ազգագրական, երկրաբանական, բուսաբանական, կենդանաբանական) և ուներ 700.000 ցուցանմուշ¹⁰⁶:

Որքան մեզ հայտնի է, խորհրդային տարիներին Կովկասյան թանգարանի հավաքածուները պահպանության նպատակով բաշխվել են երեք հաստատությունների միջև: Դրանք են՝ Վրաստանի Արվեստի պետական թանգարանը, որի նկուղում հանգրվան է գտել սեպագիր արձանագրությունների հավաքածուն, և Թբիլիսիի ձեռագրերի ինստիտուտը, որին բաժին է հասել Ս. Տեր-Ավետիսյանի ջանքերով Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտահայաստանից հավաքված ձեռագրերը, իսկ միջնադարյան զանազան հուշակոթողներն ու արձանագրությունները փոխադրվել են Թբիլիսի-Մցխեթ ճանապարհին գտնվող «Արմագի» թանգարան:

Վերջինիս միահարկ ու անշուք շինությունը, որտեղ «պահպանվում» էին մեր բռնագրավված կոթողները, 1980-ական թվականների վերջերին և 1990-ականների սկզբներին գտնվում էր ծայ-

¹⁰⁵ Նույն տեղում, թ. 4:

¹⁰⁶ Джавахишвили А. И., նշվ. հոդվ., էջ 111:



«Արմագի» թանգարանի կիսավեր վիճակը 1990-ական թվականների վերջերին



«Արմազի» թանգարանի կիսավեր վիճակը 1990-ական թվականների վերջերին

րահեղ քայքայված, մինչև իսկ վթարային վիճակում:

Մեր այցելությունների ժամանակ (1988-1992 թթ.) Թբիլիսիից հեռու մեկուսի վայրում գտնվող թանգարանի պահպանությունն իրականացնում էր շենքի հարևանությամբ սեփական տանը բնակվող պահակը: Վերջինիս հետ կայացած մեր հանդիպումից պարզվեց, որ նրա պարտականությունն ոչ այնքան թանգարանի պահպանությունն էր, որքան ազգությամբ հայ այցելուների մուտքը արգելելն ու խոչընդոտելը:

Թանգարանի հայկական նյութերի սրահում ներկայացված ցուցանմուշներն արդեն գուրկ էին բացատրագրերից. որոշ կոթողների կողերին կամ թիկունքին նշմարելի էին միայն ներկով գրված ինչ-ինչ թվեր:

Հայտնի է նաև, որ շինության տևական անխնամ վիճակի հետևանքով 1993-1994 թթ. ուղիղ ցուցանմուշների վրա փլուզվեց թանգարանի բետոնածածկ տանիքը: Կոտրատվեցին մի շարք արձանագրություններ և խաչքարեր, իսկ Մարիամ Մելիք-Աղամալյանի մարմարակերտ տապանաքարը բեկորների վերածվեց:

2004 թ. կիսավեր թանգարանի ներսում և բակում թափված կոթողների զգալի մասն անհետա-



«Արմագի» թանգարանի կիսավեր շենքից դուրս թափված հայկական հուշակոթողներից

ցած էր, իսկ մյուսները փլվածքների և աղբի մեջ էին:

Նկատի առնելով «Արմագի» թանգարանում հանգրվան գտած հայկական հուշակոթողների ոչնչացման ու կորստյան տխուր իրողությունը՝ ահազանգեր հնչեցվեցին հայկական մամուլում¹⁰⁷:


Սակայն կոթողները Հայաստանի պատմության պետական թանգարանին վերադարձնելու վերաբերյալ բարձրացված հարցը, որն առկախ էր 1919 թ. ի վեր, լուծում կարող էր ստանալ միայն պետական միջամտության (առնվազն՝ ՀՀ մշակույթի նախարարության) շնորհիվ:

Ցավոք, ինչպես հայտնի է, ազգային տարագիր մշակութային ժառանգությունը հայրենիք վերադարձնելու ուղղությամբ ակնկալվող պետական միջամտությունը տեղի չունեցավ...

Հաջորդիվ ներկայացնում ենք երբեմնի Կովկասյան թանգարանից Թբիլիսի-Սցխեթ ճանապարհին գտնվող «Արմագի» և Վրաստանի արվեստի պետական թանգարաններ փոխադրված բոլոր այն հուշակոթողներին վերաբերող տվյալները, որոնք հնարավոր է եղել ի մի բերել տարիներ շարունակ կատարած փնտրտուքի արդյունքում:

¹⁰⁷ **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի նմուշները «Կովկասյան թանգարանում» և դրանց հետագա ճակատագիրը.– «Հայոց աշխարհ», 16.09.1997, № 66, էջ 8: Նույնի՝ Հուշարձանների բռնագաղթի դեպի անհայտություն, «Հայոց աշխարհ», 24.12.1997, № 136, էջ 1, 8: Նշված հոդվածները վերահրատարակվել են նաև Ս. Կարապետյանի «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները» (Երևան, 1998) աշխատության մեջ:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐԸ



ԽԱՉԲԱՐ ՀԻՆ ՁՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 183, նոր՝ 39:

Խաչքար, չափերը՝ 186 x 60 x 18 սմ: Հին Ձուղայից 1874 թ. քանգարան է փոխադրել Գ. Ռարդեն: Վերնամասում կամարաշարի ներքո գտնվող պատկերաքանդակներից վեր ու վար մեկական տող, կենաց ծառի տակ՝ երկտող, վարդյակի չորս անկյուններում (տարեթիվն է՝ միատող) և ստորին մասում՝ հեծյալի քանդակի կողքին եռատող փորագրված է.

*Ատին, Մարիամ, Մարաց Յ(իսու)ս
Ք(րիստո)ս: Մէլ(ի)ք Գա(ս)պ(ա)ր, Բ(ա)ղ-
տ(ա)ր, Ք(ա)սպ(ա)ր, Տ(ա)ճ(ատ)ի |
Ս(ուր)բ խաչս բարեխաւս է ի Ք(րիստո)ս
հոգ(ու)ն Միրզումին, կ(ո)ղ(ա)կ(ի)ցն՝ Գու-
լիխասին: | Գրիգոր, վ(ա)ր/պետ Սարգ(ի)ս:
| Թվ(ին) ՌՃԱ (1602): | խ(ա)չս յ(ի)շ(ա)-
տ(ա)կ է | Միրզումի/ն և կ(ո)ղ(ա)կց(տյ)ն:*

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработан-
ная совместно с учеными специалистами и узданныя д-
м Г. И. Радде, т.V, Тифлис, 1902, с. 205.

ԽԱՉՔԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 182, նոր՝ 38:

Խաչքար. չափերը՝ 191 x 63 x 15 սմ: Հին Ջուղայից 1874 թ. քանդարան է փոխադրել Գ. Ռադդեն: Վարդյակի շուրջ և դրանից ցած հեծյալի քանդակի կողքին՝ 6 տող.

*ԹՎ(ԻՆ) ՌԻԸ (1599), ս(ուր)ք ի(ս)չս
յ(ի)շ(ա)տ(ակ է) | և բար(ե)խաւ/ս առ
Ք(ր)իստոյս Սաւրթա/յվալէ | հ(ո)գոյն:*

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработан-
ная совместно с учеными специалистами и узданныя д-
м Г. И. Радде, том V, Тифлис, 1902, с. 204-205.



ԽՈՅԱԶԵՎ ՏԱՊԱՆԱԲԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 184, նոր՝ 41:

Խոյաձև տապանարար (կարմիր ավազաքար). չափերը՝ 104 x 65 սմ: Հին Ջուղայից 1874 թ. թանգարան է փոխադրելԳ. Ռադդեն: Երեսներից մեկին եռատող փորագրված է.

Ա(յ)ս է հանգիստս / Մանասէ հոգ/ուն:

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработанные совместно с учеными специалистами и узданные д-м Г. И. Радде, том V, Тифлис, 1902, с. 205-206.





ԽՈՅԱԶԵՎ ՏԱՊԱՆԱԲԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 185, նոր՝ 42:

Խոյաձև տապանաքար. չափերը՝ 100 x 63 սմ: Հին Ջուղայից 1874 թ. թանգարան է փոխադրել Գ. Ռադդեն: Երեսներից մեկին քառատող փորագրված է.

Խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է / Յովանիսին, թվ(ին) / ՌԾԱ (1602):

Հրատ. առաջին անգամ:





ԽԱՉՔԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 179:

Խաչքար. Հին Ջուղայից 1874 թ. բանգարան է փոխադրել Գ. Ռադդեն: Վարդյակի ձախ ստորին անկյունում փորագրված է.

ՌԼ (1581) ք(վին):

Հրատ. "Коллекции Кавказского музея", обработанные совместно с учеными специалистами и узданныя д-м Г. И. Радде, т. V, Тифлис, 1902, с. 204.







ԽԱՉԲԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 181, նոր՝ 37:

Խաչքար. չափերը՝ 160 x 62 x 16 սմ: Թանգարան է փոխադրվել 1874 թ. Հին Ջուղայից: Խաչաքերի և վարդյակի շուրջ փորագրված է.

*Ս(ուր)բ խաչս/ յ(ի)շ(ա)տ(ա)կ Դօլիթին,
ք(վ)ին Ռեթ (1600):*

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработанные совместно с учеными специалистами и узданныя д-м Г. И. Радде, т. V, Тифлис, 1902, с. 204.



ԽԱՉՔԱՐ ՀԻՆ ՁՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. նոր՝ 40:

Խաչքար. չափերը՝ 143 x 49 x 12 սմ: Հին Ձուղայից 1874 թ. քանգարան է փոխադրել Գ. Ռադդեն: Վարդյակի տակ հողմահար արձանագրությունից ընթերցվում են սկզբի երկու տողերը.

Ս(ուր)ք նշանս տ/էրունական/...:
Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉՔԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. նոր՝ 121:

Խաչքար. չափերը՝ 238 x 100 x 32 սմ: Հին Ջուղայից թանգարան է փոխադրել 1874 թ. Գ. Ռադդեն: Քիվին՝ մեկ տողով, իսկ հիմնախաչի վերին թևից ձախ՝ երկու կարճ տող, ելնդագիր գրչությամբ.

Մ(ուր)ք խաչս բա(ր)եխա(ւ)ս Վերտի իշից (°), թվ... / կազմող / ... Տ(է)ր Ո(հա)նս:
Հրատ. առաջին անգամ:





ՏԱՊԱՆԱԶԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Գույքահամար. նոր՝ 204:

Տապանաքար, օրորոցածև. չափերը՝ 155 x 60 x 41 սմ: Թանգարան է փոխադրվել Հայաստանից (ստույգ տեղն անհայտ է): Հարավային երեսին պատկերաքանդակներ են, հյուսիսային կողմում իրար կից կամարաշարի ներքո 4 խաչեր են: Եվս մեկը քանդակված է արևմտյան նեղ կողին, իսկ արևելյան նեղ կողին 6 տողով արձանագրված է.

Ես Մելիք / Խաունս Արին/ակով կ(ան)կ(ն)եցի / խաչս բարե/խաւս իմ որդի Պարին Պ(ե)կ[կ](ի)ն:

Հրատ. առաջին անգամ:





ԽԱՉՔԱՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. հին՝ 180, նոր՝ 36:

Խաչքար. Հին Ջուղայից 1874 թ. քանդարան է փոխադրել Գ. Ռադդեն: Կտորված է՝ երկու մասի բաժանված: Հավերժության վարդյակի շուրջ չորս անկյուններում փորագրված է թվականը, իսկ դրանից ցած եռատող արձանագրություն է.

ԹՎ(ին) ՌԻԹ (1600). Ս(ուր)ք խաչս յիշ(ա)տ(ա)կ է/ Մէրխ(ա)սին հո/գոյն, թվ(ին) ՌԻԹ (1600):

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработанные совместно с учеными специалистами и узданные д-м Г. И. Радде, т. V, Тифлис, 1902, с. 204.





ԽՈՅԱՉԵՎ ՏԱՊԱՆԱԲԱՐԻ ԲԵԿՈՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

Գույքահամար. °

Խոյաձև տապանաքարի գեղաքանդակ գլխամաս (բեկոր): Հին Ջուղայից 1874 թ. թանգարան է փոխադրել Գ. Ռադրեն:



ԽԱՉԲԱՐ

Գույքահամար. °

Խաչքար. հայտնաբերման նախնական տեղն ու թանգարան փոխադրելու ժամանակն անհայտ են:



ԽԱՉՔԱՐ

Գույքահամար. նոր՝ 427:

Խաչքար. թանգարան փոխադրելու ժամանակն ու նախնական տեղն անհայտ են: Պահպանված է խաչքարի ապակե նեգատիվը, որի գոյությունը հուշում է, որ հուշարձանը թանգարան է փոխադրվել ԺԹ դարի վերջին կամ Ի դարասկզբին: Ստորին մասում՝ 5 տող արձանագրություն:



ԽԱՉԲԱՐ

Գույքահամար. °

Խաչքար. հայտնաբերման նախնական տեղն ու թանգարան փոխադրելու ժամանակն անհայտ են:



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԵԼՈՐԵՉԵՆՍԿԻՑ

Գույքահամար. հին՝ 125, նոր՝ 30:

Նեղ ու երկար արձանագիր սալիկ. չափերը՝ 89 x 22 x 20 սմ: Հայտնաբերվել է Մայկոպի գավառի Բելորեչենսկ ստանիցայի մոտ գտնվող եկեղեցու ավերակների մեջ: Արդեն 1893 թ. փոխադրված է եղել Կովկասյան թանգարան: Ունի ելնդագիր եռատող արձանագրություն.

Կատարեցաւ եկեղեցիս / ձեռամբ քարգործ Խ/րատսպ եւ... ասիաճուն:

Հրատ. “Коллекции Кавказского музея”, обработанные совместно с учеными специалистами и узданныя д-м Г. И. Раде, т. V, Тифлис, 1902, с. 197. Նաև՝ Кучук-Иоанесов, Армянская надпись XII столетия.— “Материалы по археологии Кавказа”, выпуск III, Москва, 1893, с. 106-109.

Ծանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանի վերծանությունն է. «Կատարեցաւ եկեղեցիս ձեռամբ քարգործիս Մ... րպէին. Հայոց... ՈՒն»: Վերջում կարդացած «ՈՒ» տառերը տարեթիվ համարելով՝ վիճագիրը թվագրել է՝ 1171 թ. (620+551): Առանց որևէ քննության «Հայկական վերտառություն մի ԺԲ դարու» վերնագրով նույն հոդվածը հայերեն թարգմանությամբ լույս է տեսել նաև «Բազմավէպ» հանդեսում (1893, էջ 193-196): Մինչդեռ Հարություն քահանա Միրիմանյանցն ու Ա. Թումանյանցը վիճագրի երրորդ տողում տարեթվի փոխարեն կարդացել են «Կաֆայուն» (տես՝ “Коллекции Кавказского музея”, с. 197):



ՏԱՊԱՆԱԶԱՐԻ ԲԵԿՈՐ

Գույքահամար. °

Տապանաքարի բեկոր. նախնական տեղն ու թանգարան փոխադրելու ժամանակն անհայտ են: Ունի երկտող արձանագրությունը.

Այս է տապան Պաշրնճաղեցի Տ(է)ր Նազ... / ... թվ(ին) ՌՃՀԵ (1726):

Հրատ. առաջին անգամ:



ՋԳՐԱՇԵՆԻ ՍԲ. ԱՎԵՏՅԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿՆԵՐ

Գույքահամար. նոր՝ 191-192:

Բարձրաքանդակներ: Թանգարան են փոխադրվել Ջգրաշենի Սբ. Ավետյաց եկեղեցուց 1949 թ.՝ եկեղեցին քանդելու ընթացքում: Ի սկզբանե ազուցված են եղել եկեղեցու թմբուկի վերնամասում:



ԱՐՁԱՆ ՈՍԿԵՎԱՆԻՑ

Գույքահամար. °

Մարդու քարակերտ արձան: Հայտնաբերվել է Ոսկեան գյուղից (Տավուշի մարզ): Թանգարան է փոխադրվել Սմբատ Տեր-Ավետիսյանի ջանքերով 1910-ական թվականների սկզբներին:



ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՃԵՆ ԴԻՐԲ ԳՅՈՒԴԻՑ

*Գույքահամար **

Խաչքար. պատճեն պատրաստելու և թանգարան փոխադրելու ստույգ ժամանակն ու հեղինակներն անհայտ են: Բնօրինակը գտնվում է Քարելի շրջանի Դիրբ գյուղում: Ազուցված է ջրաղացի վերածված հայոց Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատին: Վերին խաչաթևի երկու կողմերում և ստորին մասում արձանագրված է.

ԹՎ(ին) ՋԺԷ (1468) [խա]չդ Ք(րիստոս)ի, աւգնեա Նէրսէ | [Դեկա]նոզ Նաթաւպի ծնողն եւ | զաւակ(ա)ց նորի:

Հրատ. **Мурадян П. М.**, Армянская эпитафика Грузии: Картли и Кахети, Ереван, 1985, с. 127.



ԽԱՉՔԱՐ

Գույքահամար. նոր՝ 224:

Խաչքար. չափերը՝ 85 x 56 x 16 սմ: Թանգարան փոխադրելու ժամանակն ու նախնական տեղն անհայտ են: Ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով հարևան է պատմական Գուգարքի ԺԳ-ԺԴ դարերի խաչքարերին: Վերին խաչաթևի երկու կողմերում երկտող փորագրված է.

Ս(ուր)ք Սա(րգիս):

Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉՔԱՐ՝ ՓՈԽԱԴՐՎԱԾ ԴՄԱՆԻՍ ՔԱՂԱՔԱՏԵՂԻՑ

Գույքահամար. նոր՝ 620:

Խաչքար. չափերը՝ 44 x 25 x 11 սմ: Հայտնաբերվել է 1963 թ. Դմանիս քաղաքատեղիի պեղումների ընթացքում և փոխադրվել թանգարան: Թվագրման հավանական ժամանակաշրջանը՝ ԺԴ-ԺԶ դարեր: Խաչի ստորին մասում մեկ տողով անվարժ փորագրված է.

Դավիթ:

Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉՔԱՐ՝ ՓՈԽԱԴՐՎԱԾ ՊԱՏԱՐԱ-ԻՐԱԳԱ ԳՅՈՒՂԻՑ

Գույքահանար. նոր՝ 549:

Խաչքար. չափերը՝ 75 x 58 սմ: Հայտնաբերվել է Թեթրի-Ճղարոյի շրջանի Պատարա-Իրագա գյուղում: 1958 թ. թանգարան է փոխադրել ազգությամբ հույն Պ. Լազարիդիսը: Խաչաքանդակի երկու կողմերում երեքական կարճ տողով փորագրված է.

ԹՎ(ին) | ՋՀ(1521) | Խ(ա)չս | Մոլր|ատէ:

Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉՔԱՐ

Գույքահամար. նոր՝ 267:

Խաչքար. չափերը՝ 118 x 53 x 11 սմ: Թանգարան փոխադրելու ժամանակն ու նախնական տեղն անհայտ են: Ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով հար և նման է Հյուսիսարևելյան Հայաստանի բազմաթիվ հնավայրերում պահպանված Ժ-ԺԱ դարերով թվագրվող խաչքարերին: Կտորված է ինչպես վերին աջ անկյունից, այնպես էլ ստորին մասից:



ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՆՐԱԿԵՐՏ

Գույքահամար. °

Եկեղեցու մանրակերտ: Թանգարան փոխադրելու ժամանակն ու նախնական տեղն անհայտ են: Հավանաբար թվագրվում է ՇԳ դարով:



ԱՂԲՅՈՒՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴՄԱՆԻՍԻՑ

Գույքահամար. նոր 302:

Աղբյուրի շինարարական քառատող արձանագրությանը սպիտակ քար. չափերը՝ 48 x 28 x 8 սմ: Հայտնաբերել է Կորնել Կեկելիձեն Դմանիս գյուղի աղբյուրի հատակից և փոխադրել թանգարան: Հնգատող վիմագրի բովանդակությունն է.

Շինեցաւ աղբիւրս յիշատակ / Կարապետի որդի / Սարգիսին, ՌՃԾԱ (1702) / թվին:
Հրատ. առաջին անգամ:



ԱՐՁԱՆԱԳԻՐ ԽՈՅԱԿ ԲԱՂԴԱՏԻՍ-ԽԵՎԻՑ

Գույքահամար. նոր՝ 542:

Եկեղեցու սյան խոյակ. չափերը՝ 43 x 31 x 23 սմ: Նյութը՝ մոխրագույն կրաքար: Կոտրված է երկու մասի: Հայտնաբերվել է 1957 թ. Բոլնիսի շրջանի Բոլնիս-Խաչեն գյուղի տարածքում գտնվող «Բաղդադիս-խևի» կոչված գյուղատեղիի եկեղեցու ավերակների մեջ: Լայնակի երեսին արձանագրված է հինգ տող.

Հայոց թվական/ութեանս :Ն:Ծ:Դ: (1005) | ...սարգա|...մք ես Ս|... աշկալիտ(°)...:

Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉԲԱՐ

Գուլքահամար. նոր՝ 280:

Խաչքար. չափերը՝ 32 x 18 x 7 սմ: Նախնական տեղն ու քանդարան փոխադրելու ժամանակն անհայտ են:



ԽԱՉԲԱՐ

Գույքահամար. նոր՝ 280(ա):

Խաչքար: Նախնական տեղն ու թանգարան փոխադրելու ժամանակն անհայտ են:



ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ

Գույքահամար. նոր՝ 274:

Խաչքարի բեկոր. չափերը՝ 58 x 19 x 15 սմ: Թանգարան փոխադրելու ժամանակն ու հայտնաբերման վայրն անհայտ են: Ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով հար և նման է Դմանիս քաղաքատեղիում պահպանված ԺԳ դարի սկզբներով թվագրվող որմնափակ խաչքարերին: Ուստի, կարծում ենք, խաչքարի այս բեկորն էլ թանգարան է փոխադրվել նույն վայրից: Եզրագոտիով ձգվում է կիսաեղծ միատող արձանագրություն:



ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐԱԲԵԿՈՐ

Գույքահամար. նոր՝ 946:

Արձանագիր քարաբեկոր: Թանգարան է փոխադրվել Մառնեուլից: Վիմագրի պահպանված բովանդակությունից հասկացվում է, որ խոսքը Սանահինի թեմական իրավասության ներքո գտնվող մի եկեղեցու կառուցման մասին է: Պահպանվել է միջնամասը՝ սկզբից և վերջից թերի հնգատող շինարարական արձանագրությամբ.

...*(հայրե)նիք տվեածէն ի վախմ Սա(նահնու)...*

...*ս առաջնորդութ(եամբ)...*

...*(Սարգի)ս եպ(իս)կ(ոսպո)ս շինեցի զե(եկեղեցիս)...*

...*թե(ան) Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնին յ...*

ԹՎ(ԻՆ) ՌՉԷ (1638):

Հրատ. առաջին անգամ:



ԽԱՉԱԿՈԹՈՂ ՍՈՂՔԻՑ

Գույքահամար. նոր՝ 122:

Խաչակոթող. չափերը՝ 306 x 49 x 34 սմ: Թանգարան է փոխադրել Ե. Լալայանը Սողք ավանից: Քառանիստ է, երեք կողմերից՝ զեղաքանդակ ու արձանագիր: Դիմային երեսին կա նաև թվականը:

Շնորհոք Աստուծոյ եւ Այտին Պալասանս, Դաւլաթ բէկս, Աստուածապաւս ծառայք Աստուծոյ կանկնեցուցաք սուրբ խաչս բարեխաւս ծնողաց մերոց Քամային եւ Փարին, Սոլտանին, Մահպութին. թվին ՌՃԲ (1653):

Հրատ. **Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ժովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 620: **Լալայան Ե.**, Ազգագրական հանդես, XIX, էջ 26: «Իվան հայ վիճագրության», կազմ. Ս. Բարխուդարյան, պր. IV, Երևան, 1973, էջ 333:

Ծանոթ. այս և համանման երկու կոթողները Սողք ավանից թանգարան է փոխադրել Ե. Լալայանը (դա պետք է կատարված լինի 1903 թ-ից առաջ, քանի որ այդ թվականին դրանք արդեն ցուցադրված էին թանգարանում): Եղել է երեք կոթող, բայց Թիֆլիս փոխադրելու ժամանակ ճանապարհին դրանցից մեկը (1653 թ.) սայլից սահելով՝ ընկնել է: Կոտրված ու անպետքացած համարվելով՝ թողնվել է ճանապարհին: Վերջինս 1911 թ. Մ. Տեր-Մովսիսյանը փոխադրել է Սք. Էջմիածին և տեղադրել ճեմարանի բակում, որտեղ է և ցայժմ: Մյուս երկու կոթողը հասցվել է Թիֆլիս: 1903 թ. թանգարանի այցելուներից մեկը՝ Անդրեյ Ֆիրսովը, նշել է. «Այստեղ դուք կտեսնեք ... Էրիվանի նահանգից քրիստոնեական խաչեր...» (ընկալում՝ «Здесь вы увидите ... христианские кресты из Эриванской губернии...», Фирсов Андрей, Кавказский музей. — «Кавказ», 1903, № 84, с. 2):

1986 թ. «Արմագի» թանգարանում երկու կոթողից մեկը արդեն տեսել ենք կոտրված:





ԽԱՉԱԿՈԹՈՂ ՍՈՂՔԻՑ

Գույքահամար. նոր՝ 123:

Խաչակոթող. չափերը՝ 272 x 58 x 36 սմ: Թանգարան է փոխադրել Ե. Լալայանը Սողք ավանից: Քառանիստ է: Բոլոր կողմերն էլ քանդակազարդ են: Հյուսիսային նիստին՝ ելնդագիր 5 տող.

Կամօ(քն) ա(ստուծոյ) Ես Յակ(ո)բս կ(ա)նկ(նե)ցի ... | ... խ(ա)չս բ(ա)րէ-խ(ա)ս| ծնօղ(ա)ցն իմ Պալիմ նորն, ք(վիմ) Ռ-ՀԷ (1628):

Հրատ. **Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 622: **Լալայեան Ե.**, Ազգագրական հանդես, XIX, էջ 26: «Դիվան հայ վիճագրության», կազմ. Ս. Բարխուդարյան, պր. IV, Երևան, 1973, էջ 332:

Տարընթերցում. Ըստ Լալայանի՝ «Կաման Աստուծոյ ես Յակոբս կանկնեցի գա(ուր)ք խաչս բ(ա)րեխոս ծնողացն իմ Իպային (եւ) Անհային, քվ. Ռ-ՉԷ» (1638): Սմբատյանցի մոտ տարեթիվն է՝ «Ռ-ՃԸ» (1659), և չունի «Անհայ» անձնանունը:





ՏԱՊԱՆԱԶԱՐ ՀԱՐԱՆՑ ՎԱՆՔԻՑ

Գույքահամար. նոր՝ 707:

Տապանաքար. չափերը՝ 180 x 89 x 2 սմ, նյութը՝ մարմար: 1938 թ. վանքի ավերման ժամանակ բազմաթիվ այլ տապանաքարերի հետ փոխադրվել է մարմարի մշակման արհեստանոց, որտեղից երջանիկ պատահականությամբ տեղափոխվել է թանգարան:

1993 թ. «Արմազի» թանգարանի տանիքի փլուզման հետևանքով տապանաքարը փշրվել է:

Արձանագրությունը հնգական տողով փորագրված է նախ ռուսերեն, ապա հայերեն և վրացերեն: Հայերենի բովանդակությունը հետևյալն է.

Մարիամ Իսահակեան Մելիք-Աղամալեան, | ամուսին արքայազն Աղեքսանդրի, | որդեղ Հերակլ արքայի վրաց, | ծնեալ ի 12-ն օգոստոսի 1808 ամի | եւ վախճանեալ 7-ն հոկտեմբերի 1882 ամի:

Հրատ. **Мурдян П. М.**, Армянская эпитафика Грузии: Тбилиси, Ереван, 1988, с. 62.





ԱՐՉԱՆԱԳԻՐ ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ

Գույքահամար՝

Խաչքար: Նախնական տեղը, փոխադրողի անունն ու ժամանակն անհայտ են: Թիկունքին՝ 10 տող.

Յ[անուն աստուծոյ] ես / Դաւիթ կանգնեցի զխաչս մատ յիմ այգիս եւ ետու / զերեւորս ի վանքս, / զի հողս վանացս / էր եւ այլքն իմ / զաւակացն է եւ եթէ ի մեզանէ / չիմի / ...ամէն վանացս:

Հրատ. առաջին անգամ:



ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ

Մշո Առաքելոց վանքի երկփեղկ փայտակերտ, քանդակազարդ դուռ. վերնամասում՝ պատկերաքանդակներից ցած՝ ելնդագիր արձանագրություն.

Ի թ(վին) Հ(այոց) ՇՁԳ (1134). ես Տ(է)ր Թորոս եւ Գրիգոր եւ Ղուկաս գծ(ող):

Հրատ. **Մարգիսեան Ն.**, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 232: **Тер-Аветисян С.**, Резная дверь 1134 г. из окрестностей гор. Муша.— “Известия Кавказского историко-археологического института”, Тифлис, 1925, с. 130.

Ծանոթ. 1922 թ. Սմբատ Տեր-Ավետիսյանն իր միջոցներով դուռը փոխադրել է Երևան և հանձնել Հայաստանի պատմության պետական թանգարանին:



ԽԱՉՔԱՐ ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՑ

Գույքահամար. նոր՝ 523:

Խաչքար. չափերը՝ 225 x 61 սմ: 1988 թ. գտնվում էր Թբիլիսիի արվեստի քանդարանի բակում: Փոխադրվել է Ծալկայի շրջանի Գունիա-կալա հունարենակ գյուղի «Այիրեն-մատի» եկեղեցու բակից: Խաչքարի ստորին մասում կա հայերեն և վրացերեն հետևյալ արձանագրությունը.

ԹՎ(ին)/ ՈԼԷ (1188). | Ես | Խ/ա/ն/կրո՞ս | ա ՇԾ (550) | մբեցի կակնեց/աք զխաչս ա բար/էխասս ...արբալա՞ղ:

Ծանոթ. ի դեպ, 1991 թ. մեր կողմից խաչքարի լուսանկարումը քանդարանի աշխատակիցներին այն աստիճան անցանկալի էր թվացել, որ հավանաբար ազգությամբ հայ այցելուների աչքից թաքցնելու նպատակով հաջորդ օրերին չէին զլացել խաչքարը քողարկել մոմլաթով:





ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂ ԲՐԴԱՁՈՐԻՑ

Գույքահամար՝:

Քառակող կոթող. Ե-Է դարեր: Հայտնաբերվել է Բրդաձոր գյուղի մոտից (հայաբնակ գյուղ Մառնեուլի շրջանում) և փոխադրվել Թբիլիսիի արվեստի թանգարանի բակ:





ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼԻ ԴԱՇՈՒՅՆԻ ՊԱՏՅԱՆԸ

Գույքահամար, հին՝ 851.

Դաշույնի պատյան (մեֆրիտ). 4 փակագիր՝ 2 տողով.

Հասան Ջալալ իշխան Խաչենոյ:

Հրատ. **Օրբելի Ի.**, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью, “Избранные труды”, Ереван, 1963, с. 135-145.

Ծանոթ. արձանագրությունը 1908 թ. Օրբելուն է տրամադրել Կովկասյան թանգարանի տնօրենի օգնական դ-ր Ռ. Շմիդտը: Հայտնաբերման վայրն անհայտ է: 1866 թ. գնել է Գ. Ռադդեն:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գույքահամար. հին՝ 187:

Մեպագիր արձանագրություն: Գտնվել է Սևանա լճի հարավային ափին՝ Աղիսան (այժմ՝ Գեղարքունիքի մարզ, Ներքին Գետաշեն) գյուղի մոտ: Թանգարան է փոխադրվել Գ. Ռադրեի ջանքերով:

Գույքահամար՞

Մեպագիր արձանագրությունը հայտնաբերել է Ա. Երիցյանը մահմեդական օսերով բնակեցված Վերին Սարիղամիշ գյուղի մզկիթի պատի մեջ (Կարսի մարզ): Գյուղացիների վկայության համաձայն արձանագրությունը գյուղ էին փոխադրել 5 վերստ հեռավորության վրա գտնվող անտառներից:

Գույքահամար. նոր՝ 82:

Քառանկյունի սեպագիր 7 տող արձանագրությամբ քար, չափերը՝ 22 x 53 x 60 սմ: Հանվել ու թանգարան է փոխադրվել Վանի Կարմրավոր վանքի պատից:

Գույքահամար. նոր՝ 85:

Կլոր մոխրագույն միջնամասում փոս քար, չափերը՝ 70 x 27 սմ: Թանգարան է փոխադրվել Կազանցովի ջանքերով Վարագ վանքից:

Գույքահամար. նոր՝ 86:

Քառանկյունի սրբատաշ քար, երեսին 9 տող սեպագիր արձանագրություն: Թանգարան է փոխադրվել Կազանցովի ջանքերով Վանի միջնաբերդից:

Գույքահամար. նոր՝ 87:

Մյունաքար, տրամագիծը՝ 76 սմ, բարձրությունը՝ 48 սմ: Նյութը՝ մոխրագույն բազալտ: Թանգարան է փոխադրվել Կազանցովի ջանքերով Վանի Ծվստան գյուղից:

Գույքահամար. նոր՝ 88-89:

Մեպագիր արձանագրություններով քարեր: Թանգարան են փոխադրվել Վանի Ծվստան գյուղից:

Գույքահամար. նոր՝ 90:

Մեպագիր արձանագրությամբ քար, չափերը՝ 90 x 42 x 29 սմ: Թանգարան է փոխադրվել Վանի հին քաղաքամասից:

Գույքահամար. նոր՝ 91:

Մեպագիր արձանագրությամբ քար: Թանգարան է փոխադրվել Վանի Սբ. Պողոս եկեղեցուն կից տան մոտից:

Գույքահամար. նոր՝ 92:

Մեպագիր արձանագրությամբ քար, չափերը՝ 72 x 27 սմ: Թանգարան է փոխադրվել Ա. Կազանցովի ջանքերով Վանից 10 կմ հյուսիս-արևելք գտնվող քրդաբնակ Անձավ գյուղից :

Գույքահամար. նոր՝ 93:

Մեպագիր արձանագրությամբ քար: Տրամագիծը՝ 73 սմ, բարձրությունը՝ 30 սմ: Թանգարան է փոխադրվել Ա. Կազանցովի ջանքերով Վանից 10 կմ հյուսիս-արևելք գտնվող քրդաբնակ Անձավ գյուղից:

Գույքահամար. նոր՝ 94:

Մեպագիր արձանագրությամբ քառանկյունի քար: Չափերը՝ 63 x 80 x 68 սմ: Թանգարան է փոխադրվել Վանի միջնաբերդի ստորոտից:

Գույքահամար. նոր՝ 95:

Մեպագիր արձանագրությամբ քառանկյունի քար: Չափերը՝ 70 x 35 սմ: Թանգարան է փոխադրվել Վանից՝ մասնավոր տան պատից:

Գույքահամար. նոր՝ 98:

Մեպագիր արձանագրությամբ քար, չափերը՝ 100 x 67 x 33 սմ: Գտնվել է Վանի Կուշունջամի վայրից և թանգարան փոխադրվել 1898-99 թթ. :

Գույքահամար. նոր՝ 99:

Մեպագիր արձանագրությամբ քար, չափերը՝ 42 x 36 x 26 սմ: Թանգարան է փոխադրվել Մուշից Ա. Կազանցովի ջանքերով:

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

**Շնորհակալ ենք բոլոր այն անհատներին և կազմակերպություններին,
ովքեր նախապես բաժանորդագրվելով սույն աշխատությանը դրանով իսկ
աջակից են եղել գրքի լույս ընծայման գործին:**

Անջարգոյան Սառա (Երևան).....	1
Ասլիկյան Դավիթ (Երևան).....	1
Արմենյան Ատկեն (Երևան).....	1
Խաչերյան Հրայր-Բագեն (Երևան).....	1
Կարապետյան Գասպար (Աթենք)	1
«Հորիզոն» շաբաթաթերթ (Մոնրեալ).....	1
Մուքաֆյան Արմեն-Կլոդ (Փարիզ).....	1
«ՇԵՆ» միություն (Երևան).....	10
Վարդանյան Աննա (Երևան).....	1

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

RAA ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱԶՄ

ԽՄԲԱԳԻՐ-ՄՈՒՏՔԱԳՐՈՂ
ՍՐԲԱԳՐԻՉ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ

**ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՖՐԱՆԿՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ**

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ՏՊԱՔԱՆԱԿ
ՏՊԱԳՐՎԱԾ Է

**14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2004
500
PHOTOGRAVURE ZAVEN & FILS (ԲԵՅՐՈՒԹ)**

ԵՐԵՎԱՆ 2004